

241  
—  
0 - 28

ЧОД  
9W

## БЕРЕГИТЕ КНИГУ!

ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ.

Возвращайте книгу в  
срок, чтобы и другие  
могли воспользоваться  
ею.


1836

3489

678

83

Ա Ս Տ Վ Ա Ղ Ա Ռ Ա Հ  
Մ Ա Կ Ա Ն Ց



Ե

Ո Թ Ո Ւ

22

СУЛЛА  
ВОЛГА  
СОЛНЦЕ

СУЛЛА

1916  
241  
0-28

Ո Թ Ո Ւ

15 NOV 2011 8

83

1908

Կ Ա Ր Ա Խ Ո Ւ Թ Ո Ւ

Տ Ա Ա Յ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

№ 4115%



57  
9620

ՎԵՆԵՍԻԿ  
ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

—  
1855

381 5206  
16 JUL 2013 41+8

0 0 0 0 0 0

8018

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԵԼՈՎՈՆ



381 5206  
0 0 0 0 0 0  
8018

381

Ո Թ Ո Ն

Կ Ա Մ

ԿՈՐՍՈՒՄԸ ՏՂԱՅ

174158.

ԳԼՈՒԽ Ա.

Միայն բարեպաշտութիւնն է մարդուն  
ուրախութեան պատճառ :

Դաձնութե զետին քովերը մեծ ան-  
տառի մը մէջ առանձին տնակով կը  
բնակեր Յահոգորա անունով բարեպաշտ  
որբեարի կին մը : Ասոր էրիկը ձենորս  
մըն էր, որ զեռ տարիքը շառած լիս-  
ճանեցաւ . ուստի Յահոգորային սրտին  
մեծ կսկիճն ալ աս էր որ ասպեկտ բա-  
ւական բան՝ ու կարողաթիւն չուներ :  
Բայժանդակ յոյսը իր մէկ հատիկ սիրելի  
զաւկին վրայ էր զբեր, որ վեց տարեկան

տղայ մըն էր Ոթոն անունով։ Աս որ  
բեարի կինը որչափ որ աղքատցաւ, այն-  
չափ ալ բարեալաշութիւնն ու առաքի-  
նութիւնը աւելցաւ . “Կ'օգտէ ինծի, կ'ը-  
սէր, որ կարենամ իսկին ամմէն օրուան  
ասլրուստս դժնալ, ու որդւոյս պահել  
աս տնակը . սսկէ աւելի հարստութիւն  
պէտքը չէ ինծի։ Ոթոնս երբոր մեծ-  
նայ, հօրը ~~արհեստը~~ սօրվուի, ան ատեն  
առանց ինծի կարօտ ըլլալու իր զլսուն  
ճարը կը տեսնէ։ Ճարուստ ան մարդն  
է՝ որ զիտէ իր փափաքներուն չափ դր-  
նել ու քիչ բանով գոհ ըլլալ,, :

Յակովորան էրկանը մեռնելէն ետքը  
ձուկ որսալը լիրջայուց . ուստի ձուկ  
բռնելու ցանցը, և ուրիշ ամմէն տեսակ  
ձինորսութեան զործիքները տանը չորս  
դին երեսի լիրայ ձգած էին . նաւակն  
ալ զետէն դուրս քաշած ու տնակին մէկ  
կողմը կը թընցուցած կեցած էր։ Ասոնք  
տեսնողին սիրտը կտոր կառը կ'ըլլար, ու  
կ'իմացուէր թէ խեղջ տունը տակնուվայ  
եղեր է։ Բայց Յակովորան Վատուծոյ ա-  
պաւինած, սկսաւ իր ձեռագործովը ապ-  
րուստը ճարել . և որովհետեւ աղէկ ուս-

կան շինել գիտէր , մէկ կողմանէ կը շինէր ու կը ծախէր ան տեղի ձևադրման բուն : Իսոլոր օրը ասանկ աշխատելէն ետքը , շատ անգամ ինչուան կէս գիշերն աւճրադի լուսով կ'աշխատէր :

Ոթոնն ալ օրէ օր տարիքը առնելով միշտ կը նայէր որ մօրը խօսքէն դուրս չելէ , ու անոր սիրտը չվշտացընէ . Երարակամիտ տղայ ըլլալուն՝ շուտով իմացաւ իրենց վիճակին խեղջութիւնը . ուստի իր կողմանէ կը ջանար որ միշտ մօրը օդնութիւն մը ընէ : Քանի որ կը տեսնէր իր մայրը տրտմութեան մէջ , մէկէն կը վագէր կ'իյնար զիրկը , իր սլզտի հասակէն վեր կը նայէր որ մխիթարի ուրախացընէ զինքը :

Օր մը Յօհանն երբոր սպատուհանին գիմացը նատեր կ'աշխատէր , տեսաւ որ մէկը դէպ իր տնակը կու զայ . նայեցաւ տեսաւ որ եկողը իր եղլայրն է . անիկայ ներս մտածին ակէս , “ Առ Յօհանն դորա , ըսաւ , ահա քեզի ձուկ մը բերի որ այսօրուան կերակուրդ ըլլայ . ի՞նչպէս , աղէկ ես . տղադ ի՞նչպէս է , ” :

Յօհանն մէկէն ոտք եղաւ , թողոց

ձեռքին ուոկանը , առաւ եղարքը բերած  
ձուկը , ու սիրտը ելաւ , սկսաւ լալով ը-  
սել եղարքը . “ Խ՞ոչ խեղջութիւն է քա-  
շածս . Երկանս մահուանէն ետքը աս-  
տունը ասանի մեծ ձկան երես տեսած  
շունէր :

— Այլիկ , կ'աղաչեմ , մի լար այդշափ ,  
ըսաւ Ովոն . Ես խօսք կու տամ քեզի ,  
որ երբոր մեծնամ նէ , այդպիսի ձկներ  
այնշափ սկիտի բռնեմ . որ դուն ալ զար-  
մանաս , ու իմանաս թէ ես քեզ որշափ  
կը սիրեմ , : Այլը աշուըները սրբեց , ու  
զուարթութեամբ մը ըսաւ տղոն . “ Վրյու-  
սամ , որդեակ իմ , որ խօսքիդ վրայ կը  
կենաս Ըստուծով , և ծերութեանս ատե-  
նը զիս կ'ուրախացրնես . դու ես իմ մէկ  
հատիկ սրտիս միսիթարութիւնը . ա՛չ ,  
թէ որ հօրդ պէս բարեպաշտ առաքինի  
ըլլաս , անատեն ինծի պէս երջանիկ մայր  
սկիտի չըլլայ աշխըրքիս վրայ , : Ովոն ալ  
նորէն խօսք տուաւ :

Կշնան ատենները օր մը առաւօտանոց  
կանուխ ելաւ խեղջ կնիկը՝ սկսաւ աշխա-  
տիկ հիւսել մէկ ուոկան մը օր ան օրը  
կ'ուզէր լմբնացրնել , և հետեւեալ օրը ծա-

Խել ձենորախ մը որ ուռկանի կարօս էր :  
Ովոնն ալ մօրը հետ ելաւ նախաճաշիլլը  
ըրաւ , առաւ սլզտի կողովը , քաշեց զլու-  
խը գնաց իրենց քովի անտառը որ կաղա-  
մախի պտուղ (բալամուտ) ժորլէ . վասն  
զի մայրը ան սլտուրներէն ձեխ կը հաներ  
ձմեռուան իրիկունները վասելու համար :  
Ովոնի սիրտը անպատմելի ուրախութեամբ  
կը լեցուէր , երբոր իր պլզտի կողովը լեցուն  
տուն կը դառնար . և ան օրը քանի մը  
անդամ՝ գնաց ու եկաւ :

Կէսօրուան մօտ տղան անօթեցաւ , մայրն  
ալ կանչեց զինքը կերակուր ուտելու . զլուխ  
զլսի տուած նստան մէկտեղ կանանչ խո-  
տին վրայ ծառի մը տակ , ախորժանօք սկը-  
սան ուտել իրենց հայն ու կաթը :

Երբոր աղքատ սեղաննին լմնցաւ , թէ՛ռ-  
դորա դարձաւ ըսաւ իր զաւկին . “ Որ-  
դեակ , դուն այսօք ինչուան կէսօր շատ  
անդամ՝ երթալով գալովդ յոգնաս ես .  
ուստի քիչ մը զլուխով վար դիր քնացիք  
աս կաղամախի ծառին տակը կակուղ խո-  
տին վրայ . ժամէ մը ետքը ես կու դամ  
քեզի ձայն կու տամ . մնաս բարով , անուշ  
ըլլայ քունդ , ըսաւ ու եկաւ գնաց բանը :

Աշրկու իրեք անդամնորէն եկաւ նայեցաւ՝  
ու դարձաւ տեղը սկսաւ աշխատիլ :

Ոթոն գլուխը թեխն վրայ դրած, կո-  
ղովն ալ մէկ քովը անուշ անուշ կը քնա-  
նար : Տարակ քամին քանի որ կը փչէր՝  
աղուոր ոսկեպոյն դեղին մազերուն խոսկո-  
սիքները կը շարժէին, ու անմեղ աղաւնին  
կարծես թէ կը ծիծաղէր . իր հրեշտակային  
դէմքին վրայ վարդի ալէս կը փայլէր անմե-  
ղութիւնը :

Թէոդորա երանի կու տար իրեն, տես-  
նելով իր զաւկին անմեղութիւնները . ալ  
չի դիմացաւ, սիրտը եղաւ, ծունկ չոքե-  
ցաւ, շնորհակալ եղաւ Վստուծոյ Համա-  
ռու կերպով մը, ինչպէս որ սովորութիւն  
ունէր ընելու ամէն իրիկուն անկողին մըտ-  
նելէն առաջ . ու սկսաւ առաջ տանել իր  
քանը : Վիակերալ արտօրնօք բանելէն վեր-  
ջը, իրիկուն չեղած գործքը լմրնցուց, ու  
զնաց որ արթընցընէ Ոթոնը . բայց տը-  
ղան չիկար : “ Խեղճ տղայ, ըստ մոքէն  
թէոդորան . կարելի է թէ ինքնիրմէն  
արթընցեր է, ու արդելք չըլլամմօրս ըսե-  
լով գացեր է նորէն անտառը կաղամախի  
սլտուղ ժողվելու . ահա կողովն ալ հոս չէ .

անտարակոյս այսպէս է,, : Խեղճ մայրը  
չէր զիտեր թէ զլսուն ի՞նչ ձիւն եկեր էր :

Ուստի առանց աւելի հոգ ընելու իր  
զաւկին ինչ ըլլալուն վրայ՝ դարձաւ տունը  
առաւ ուռիանը, տարածեց տանը պատին  
վրայ, ու ինչ որ վրան պակաս մնացած  
տեսաւ նէ շտկըտեց, ետքը ժողից պլից,  
միտքը դրաւ որ վաղը տանի տայ ձենոր-  
սին : Բայց Աթոնը չերեցաւ :

Իրիկուն եղաւ, մութը կոխեց, եկող  
դացող չիկայ . ան ատեն խեղճ որբեա-  
րիին մտմտուքը առաւ : Եշաւ կղակեց տա-  
նը դուռը, դրաւ բանալիքը անանկ տեղ մը  
որ տղան զիտէր, ու գնաց փնտոելու ան-  
տառին մէջ : Տեղ չմնաց որ չնայի . քանի  
անդամ կեցաւ կանչեց տղան իր անունո-  
վը, բայց պատասխան տուող չիկար :

Ան ատեն տարակոյսը պատեց զինքը .  
սկսաւ ինքն իրեն մտածել ու ըսիլ . “ Ձը-  
լայ թէ դժբաղդութիւն մը հանդխած ըլ-  
լայ տղուս . չըլայ թէ գետին եղերքը դա-  
ցած ըլլայ խաղալու, որ ես իրեն այնչափ  
սաստիկ արգիլեր եմ. ահ, ի՞նչ պիտի ը-  
նեմ թէ որ մէջը ինկած խղդուած ըլլայ  
նէ,, : Քանի գնաց սրտին դողը աւելցաւ ,

վաղեց գնայ զետին քովը , որ կարելի է  
թէ ձենորսի մը քով զտնէ դինքը . բայց ոչ  
ձենորս տեսաւ , ոչ տղայ , և ոչ մէկ նշան  
մը : Ան ատեն բոլորովին խոռոված , գնայ  
դիմացի զեղը լալով ողբալով . ամէնքը  
զլուխը ժողինեցան , սկսան ցաւակցիլ . մա-  
նաւանդ . թէ ողորային եղայրը շատ տրը-  
տմեցաւ ան սքանչելի տղոն կորսուելուն  
վրայ : Աէկուն մէկալին հարցուեցաւ՝ ար-  
դեօք տեմնող եղան թէ չէ , բայց ոչ տե-  
սող կար , ոչ զիտցող : Ան կտրիճ մարդի-  
կը շուտ մը ցրուեցան դաշտերուն անտառ-  
ներուն մէջ և զետին քովիքը որ զտնեն ,  
բայց բոլոր աշխատանքնին սպարապ ելաւ ,  
տեղ մը չգտուեցաւ :

Երբոր մութը կոխեց , խեղճ ողորմելի  
թէ ողորան լալով ողբալով ելաւ տուն  
դարձաւ :

“ Ո՞ի բոլորովին յուսահատիր , ըստ  
իրեն ծեր ձենորսին մէկը . զեռ յոյս կայ  
տղուդ զտուելուն : Ես չեմ կարծեր թէ զե-  
տր ինկած ըլլայ , ինչու որ բաւական խելք  
ունէր տղադ , ու զիտէր թէ զետին քովի-  
քը խաղալը փորձանք մը կընայ բերել ի-  
րեն զլսուն . թէ որ ինկած ալ ըլլայ նէ ,

շուտով կ'իմացուի , վասն զի ջորը կը տանի  
զինքը հոն մարը ծանծաղը կը ձգէ , ինչ  
պէս շատ անդամ հանդիպէր է ,, :

Այս խօսքերը թաւողորային սիրտը ըս-  
միսիթարելէն ետքը ցաւերն ալ աւելցուցին :  
Ուստի սիրտը կոտրած շնորհակալ եղաւ  
ձենորմներուն ու տուն դարձաւ :

Անկարելի եղաւ իրեն ան դիշերը աչուր-  
ները գոցել .քիչ մը հանդշիլ . անոր համար  
բոլոր լացով ու տրտմութեամբ անցուց :  
Առաւօտը լուսցածին պէս մէկէն եղաւ դնաց  
նորէն տղան վնտոելու գետին քովերը . կը  
փափաքէր որ գոնէ իր որդւոյն մեռած մար-  
մինը գտնէ ջրին մէջ , վասն զի գոտը դրեր  
էր որ անտարակոյս խղզուած պիտի ըլլայ .  
բայց խեղճ որբեարին աս դառն միսիթա-  
րութինէն ալ զրկուեցաւ : Անկէ վերջը օ-  
քերով նորէն կ'երթար կը քալէր ան գետին  
քովերը իր կորսնցուցած զաւակը վնտոե-  
լու : Շատ անդամ ձենորմները վեր վար  
երթալու ատեն կը տեսնային խեղճ կինը որ  
աչուրները արցունիքով լեցուած կը ստու-  
տէր , և սրտերնին շարժելով կը քաջալե-  
րէին ու յոյս կու տային իրեն :

Վ երջապէս տեսնելով որ բոլոր իր ըրած

աշխատանքը օդուտ մը շունի , ան դժբաղը  
մայրը ալ չփնտռեց իր մէկ հատիկ սիրելի  
որդւոյն մարմինը : Իր եղայրը ան նեղու  
թեան ատենը ձեռքէ չժողուց զինքը . շատ  
անդամէկ'երթար կու դար զինքը կը մխիթա  
րէր : Յօէ ոդորան մինակ մնացած ատենը  
սրտին ցաւը աս կերպով մխայն քիչ մը կը  
փարատէր , և կ'ըսէր . “ Երկանս ատենէ  
դուրս մեռնիլը իմ գլխուս կայծակ մը եւ  
դաւ . մէկ որդի մը ունէի որ բոլոր յոյսս  
անոր վրայ էր , թէ օր մը զիս պիտի մխի  
թարէ , ան ալ ասանկ ցաւալի կերպով  
ձեռքէս ելաւ : Յօէ որ իմ յոյսս Կստուած ,  
և մխիթարանքս իրեն սուրբ կամքը չըլար ,  
և ինչուան հիմա ուրիշ յուսահատութեան  
մէջ ընկած էի : Բայց իմ տէրս Կստուած  
է . մենք Կստուծոյ հրամանին դէմ չենք  
կընար կենալ , :

Երբոր իր դրացի կնիկները կու զային  
զինքը տեսնելու ու մխիթարելու , ինքը յան  
ցանքը իր վրան առնելով կ'ըսէր , թէ ինչ  
պէս որ սկսէտք էր նէ աղէկ հոգ շտարի  
իմ զաւկիս վրայ . “ Կտոք որ զաւկի տէր  
էք , կ'ըսէր իրենց , աղէկ աչք ունեցէք  
վրանին , ու մինակ մի թողուք , վասն զի

Հիկարծած ատեննիդ զլուխնին փորձանք  
մը կու գայ,, :

Ծառադրան որ էրկանը մահուանը վրայ  
արդէն քիչ մը հիւանդ էր, հիմա աս եր-  
կրորդ ցաւալի դիպուածով բոլորովին հի-  
ւանդացաւ :

Ամէն անգամ որ երեսը դեղնած ու տը-  
կարացած սուզի ղգեստով ժամ կ'երթար,  
զեղի կնիկները կ'ըսէին իրարու, [թէ] “Առ  
խեղջ կինը այսպիսի ցաւով շատ չդիմա-  
նար կը մեռնի . անտարակոյս եղիք որ ա-  
նիկայ աս ձմեռս շշաներ,, :

Շատ անգամ ան զեղին աւագերէցը  
գնայ զինքը մխիթարելու : Աս մարդը [թէ]  
պէտև խոր ծերութիւն հասեր էր, բայց  
բոլոր ժողովուրդը իր զաւկըներուն պէս կը<sup>1</sup>  
սիրէր, և հօր պէս կը զթար խեղջերուն  
վրայ, ու աղքատները ձեռքէն եկածին չափ  
առատ ողորմութեամբ կը հոգար : (Օր մը  
ժամուն մէջ տեսաւ որ Ծառադրան երեսին  
դոյնը նետած, զլուխը կախած, աղօթա-  
զիրքը ձեռքը, ծունկ չոքած կու լար. սիրար  
չդիմացաւ, ժամկոշին ձեռքովը իմայ ըրաւ  
իրեն՝ որ սպատարագը լմբնաւէն վերջը իր  
խուցը գայ . ելաւ գնաց : Ան միջոյին ա-

ւազերէցը ալմոռին վրայ նստեր հարկաւոր  
բան մը կը զրէր . իր առաքինական կերպա-  
րանքը ու Ճերմակ մազերը նայողին պատ-  
կառանք մը կը բերէին և սրբութիւնը յայտ-  
նի վրան կ'երևնար :

Յօհէոդորային ներս մտնելը տեսածին  
պէս , մէկէն ոտք ելաւ , հրամացոց որ նըս-  
տի , և խնդրեց որ քիչ մը համբերէ ինչուան  
ձեռքի բանը զրէ լինոցընէ : Իրեն զրելու  
առենը Յօհէոդորան պատին վրայ կախած  
պատկերք մը տեսաւ զեղեցիկ ուկեզօծ շոր-  
ջանակի մէջ . ան քաշուածքին քանի որ կը  
նայէր այնչափ սիրու կ'ելար , և արցունք-  
ները կը թափէին : «Քահանան երբոր բանը  
լմբնցոց՝ դարձաւ ըստ Յօհէոդորային .  
« Կարծեմ թէ ատ պղտի պատկերքին կը  
հանիս . ի՞նչպէս , շատ ախորժեցար թէ չէ :

— Հրամեր ես , հայր սուրբ , շատ ախոր-  
ժեցայ , ըստ Յօհէոդորան . աւելի անոր  
համար որ կարծես թէ իմ քաշած ցաւե-  
րուս օրինակն է :

— Ի՞նչ բանի վրայ է , դիտես թէ չէ :

— Ի՞նչ ըսել է . սուրբ Աստուածածի-  
նը խաչին տակը նստած կու լայ իր մէկ  
հատիկ զաւակը որ Հրեայք մեռուցին :

Ծիտակը ըսեմ, ես կենացս մեջ ասանկ  
աղուոր սլատկերք տեսած չեմ:

— Առ բանը, սիրելի դուստր, այժաք է  
քեզի մեծ միսիթարանը ըլլայ : Յիսուսի  
մայրը քեզի մեծ օրինակ է, թէ՛ սաստիկ  
տրտմութեան, և թէ՛ Եստուծոյ կամացը  
կատարեալ համակերպութեան : «Այէ ի՞նչ  
ալէս աշուշները արցունքով լեցուած ցաւա-  
զին կերպով երկինք կը նայի . անով կ'իմա-  
նաս թէ ի՞նչ սոսկալի տրտմութեան մէջ է  
սիրտը իր մէկ հատիկ սիրելի որդւոյն կորա-  
տեանը վրայ : «Այէ ի՞նչ կերպով ձեւուր-  
ները կուրծքին վրայ դրած է . կեցուածքը  
ի՞նչ սղարկեցա . իր սուրբ երեսին վրայ ի՞նչ  
սրանչելի անմեղութիւն ու խոնարհութիւն :  
Գլուխն վրայի լուսեղն սղակին ալ իր սի-  
րովու համբերութեամբ քաշած նեղութիւն  
ներուն համար տրուած է իրեն . որ հիմա  
Քրիստոսի հետ մէկտեղ երկինքը կ'ուրա-  
խանայ : Քու հիմակուան վիճակիդ, սիրելի  
զաւակս, շատ նմանութիւն ունի Եստուա-  
ծածնայ քաշած նեղութիւններուն : Դուն  
ալ հիմա կու լաս կը ցաւիս քու երկանորդ և  
որդւոյդ մահուանը վրայ . գուն ալ ցաւով  
ու տրտմութեամբ յեպահա իմաստը ես .

բայց իրեն համբերութիւնը տեսնելով, ալէ տք է՝ միսիթարուխ ու սիրտ առնես։ Տաէ որ դուն ալ իրեն ալէս վշտացեր ես, իրեն ալէս ալ բոլոր սրտանց ապաւինէ։ Աստուծոյ կամացը, իրեն ալէս երկինք նայէ, ու սրտանց պաղատէ։ իրեն խոնարհ ու ցաւազին սրբով, որ քեզի ուժ տայ իրեն սիրոյն համար քաշած վիշտերուդ համբերելու։ Ըստ անգամ կը զարմանանք մենք ան մարդիկներուն վրայ որ աշխըրքիս նեղութիւններուն առանց վրդովինելու համբերեցին։ բայց ասքանիս էն կատարեալ օրինակը սուրբ Աստուծածինն է՝ որ խաչին տա՛ը սքանչելի համբերութեամբ կեցեր կը տեսներ իր սիրելի որդին չարագործի ալէս մեռնելու գատապարտուած։

“ Աղէկ գիտէր թէ իր որդին Աստուծած էր. գիտէր թէ մարդկանց միայն բարիք ըրեր է, և ան ապերախտները իրենց նախանձէն միայն դատապարտեր են զի՞րը, բայց ինքը ամեննեին չգանգատեցաւ։ Է՛կառս մեռնելու ատենը իր թշնամեացը ըրածներուն թողութիւն ուղիղովով հասկըցուց Աստուծածնայ որ ինքն ալ նոյնալէս ընէ։ Աւրիմն, գուստը իմ թաէոդորա, նայէ որ

դո՞ն ալ աս Ճամբան բո՞նես, ու սուրբ Հաւատքին սորիվեցուցածին հետեւելով սիրտող ամրացու . Հաստատ միտքդ դիր, թէ Առտուած ինչ բան որ խրկից քեզի՝ քու աղեւիութեանդ Համար խրկից : Աշխըրքիս վրայ առանց Առտուծոյ կամացը տեղեւ մըն ալ շշարժիք . իր ձեռքն է շարէն բարիք Հանել, ու մեզի միաստակար երեցած բաները օգտակար ընել : Չէ սիրիչի, չէ, շըլայ թէ յուսահատիս ցաւէդ, միշտ մնածէ քու յաւիտենական վախճանդ : Ի՞նչ բան է աս ողորմելի աշխըրքիս վրայի քիչ մը ատենուան քաշած նեղութիւննիս ան ուրախութիւններուն դիմացը, որ ետքը երկինքը պիտի վայելինք օր մը : Արդուս առաքինութիւնը նեղութեան մեջ կ'երենայ, կ'ըսէ սուրբ Առաքեալը : Կայէ Առտուածածնայ վրայ . բոլոր իր կեանքը ցաւով ու նեղութեամբ անցուցեր է : Իր միածին որդին ծնածին պէս պէտք եղաւ որ օտար երկիր վախչի՝ Հերովդէսին ձեռքն իր զաւակը խալսելու Համար : Եզրոր Հրեաստան դարձաւ՝ իր զաւակը մեծցրնելու հետ երինչուան երեսուն տարի : Այնչափ ատեն քաշուած կենալին ետքը՝ մեր փրկիչը քա-

բոլութիւն ընելու ելածին պէս՝ նախանձէն  
ու բամբասանքէն զատ ուրիշ փոխարէն  
չունեցաւ այնչափ բարիքներուն տեղը, և  
վերջը վերջը՝ իր սուրբ կեանքը խաչին վրայ  
լմբնցոց : Իրաւ է, մեծ ուրախութիւն ու  
նեցաւ սուրբ Կոտուածածինը՝ երրոր իր  
միածինը յարութիւն առած տեսաւ . բայց  
Հիսուս շուտով գնաց երկինք, և թողուց  
մայրը աշխարքիս վրայ սուրբ Հովհաննէս  
աւետարանչին յանձնելով : Ար տեսնասոր  
Հիսուս ալ չարչարանքով մտաւ արքայութիւն . նոյնալիս Կոտուածածինն ալ անոր  
հետեւելով, ետքը ինքն ալ խմեց ան նեղութեան լեղի բաժակը :

“ Կոմնիկ ալ ուրիշ բոլոր սուրբերը որ  
արիութեամբ սլատերազմեցան, արքայութիւն հանելու համար նեղութեան ձամքէն  
զատ ուրիշ ձամբայ չգտան : Աւստի սկետք  
է դուն ալ քու նեղութիւններուդ սիրով  
համբերես, որ Կոտուծոյ առջև վարձր ու  
նենաս,, :

Բարեկաշտ քակողորան ամենայն սիրով  
ու խոնարհութեամբ մտիկ ըրաւ իր քահանային խրատը : Կաքը միակերտ սլատկեր  
քին վրայ էր, և կարծես թէ բոլոր լած-

ները տիսածովը կը հաստատէր . և քանի  
որ Աստուածածնայ քաշածները աւելի  
մտածեց նէ՝ իր սրտին ցաւերն ալ այնչափ  
հանդարակեցան :

“ Հրամեր ես , հայր սուրբ , ըստ , հիմա  
կ'իմանամ թէ սկզբը չէ այսչափ ցաւիմ .  
աս կերպով ես իմ ցաւերս փոխանակ սկակ-  
սեցընեղու կ'աւելցընեմ փուռ տեղը : Ասկէ  
վերջը ես զիս Աստուծոյ կամացը կը յանձ-  
նեմ , ինչպէս որ սուրբ Աստուածածին ը-  
րաւ : Իմ սրտիս միսիմարանը աղօմքը  
սկիտի ըլլայ . վան զի կ'իմանամ թէ Աս-  
տուած միայն կընայ ինձի ուժ տալ ամմէն  
նեղութեան սիրով համբերելու : Ասկէ վեր-  
ջը ամմէն օր բոլոր սրտանց սկիտի ըսեմ  
Քրիստոսի հետ մէյտեղ ան խօսքը որ ըստ  
իր երկնաւոր Հօրը ձիթենեաց լեռը . “ Ու-  
թէ թէ իմ կամքս ըլլայ , հայր քու կամքդ , :

— Կատ ուրախ եմ , սիրելի Յօհոնու-  
րա , քու առաջադրութեանդ վրայ , ըստ  
աւագերէցը . առ տար աս սկզտի սկատիեր-  
քը , տանդ մէջ տեղ մը կախէ : Քանի որ  
վրան նայիս , միտքդ գայ առ առաջադրու-  
թիւնը օր հիմա ըրիր : Աս սկատկերքս քե-  
զի թէ յիշելիք և թէ խրատ ըլլայ : Ապղս

իր յոյսը միայն Աստուծոյ վրայ պիտի զնէ ,  
չե՞նէ՝ մարդիկ այնչափ կարողութիւն չու-  
նին որ մեր մեծամեծ ցաւերը անցընեն .  
միայն երկինքը կրնան անոնք մոցուիլ,, :

Աս հոգեշահ խօսակցութիւնը մեծ մխի-  
թարանք եղաւ խեղճ որբեարին ցաւած  
սրտին . ուրախութեամք տունը դարձաւ ,  
և համբերութեամք սկսաւ քաշել իր նեղու-  
թիւնները : Բայց քանի որ կը տեսնար ան  
ծառը՝ որուն տակը իր մէկ հատիկ սիրելի  
Ոթոնը վերջի անողամք քնայցեր էր , բոլոր  
մարմինը փուշ փուշ կ'ըլլար ցաւէն : Ան ա-  
տենը բան մը մտածեց որ իր սրտին քիչ մը  
մխիթարանք ըլլայ : Աստուածածնայ սկատ-  
կերը առաւ կախեց կաղամախին վրայ , որ  
ան ծառը տեսնելու ատենը շատ շորտի :  
“ Ուրիշ մայրերը , կ'ըսէր ինքնիրեն , իրենց  
մեռած զաւկըներուն վրայ գերեզմանի քա-  
րեր կը ձգեն . ես իմ Ոթոնիս զերեզմանը  
առ ծառս սկիտի սեսկեմ եղեր . Աստուա-  
ծածնայ սկատկելիքը ինծի սորվեցնէ , թէ  
Աստուծոյ համար ինչպէս սիրուլ համբե-  
րելելու է : Ինչպէս որ ինքը մինակ կրնայ  
հասկընալ իմ ցաւերուս մեծութիւնը , ա-  
սանել ալ ինքը միայն կրնայ վես մխիթարել,, :

“ Յանի մը օրէն եաքը նորէն տեսնուեցաւ առաքինի առագերէցին հետ , ու զորցեց սլատկերքին բանը . ան ալ իրեն բանեցոցած խելքը դուից : Այս միջոցը առագերէցը դիմացի կիրակին տաշու քարոզը սերտելու հետ ըլլալով , “ Կարդամ , ըստ , քեզի աւետարանին ան խօսքիրը որ կիրակի օրը սլիտի մեկնեմ . ”

“ Հիսուս տեսնելով ժողովրդեան բազմութիւնը , լեռը երաւ . ու երբոր նրատաւ , մօտեցան քովը իր աշկերտները . ան ատեն ինքն ալ սկսաւ խրատել զիրենք ու ըսել . ”

“ Երանի հոգւով աղքատներուն , վասն զի արքայութիւնը իրենց է :

“ Երանի հեղերուն , վասն զի աշխարհք անոնք կը ժառանգեն :

“ Երանի անոնց որ սուզի մլջ են , վասն զի անոնք սլիտի մլսիթարուին :

“ Երանի անոնց որ անօթի ու ծարաւի են արդարութեան համար , վասն զի անոնք սլիտի կշտանան :

“ Երանի ողորմածներուն , վասն զի անոնք ողորմութիւն սլիտի կտնեն :

“ Երանի անոնց որ սրտերնին մաքուր

է , վասն զի անոնք պլատուած սլատի տեսնեն :

“ Երանի՛ խաղաղաբարներուն , վասն զի անոնք Աստուծոյ որդիք սլատի ըառւին :

“ Երանի՛ անոնց որ արդարութեան համար հալածանք կը քաշնի , վասն զի արքայութիւնը անոնցն է :

“ Երանի՛ ձեզի , երբոր նախատեն ու հալածեն զձեզ , ու ամէն չարիք փուճ տեղը խօսին ձեր վրայ իմ անուանս համար . յնծայէք ու ուրախ կեցէք , վասն զի վարձքերնիդ շատ է երկինքը , :

“ Եսկիցը Քրիստոսի ըսած խօսքերը . քրիստոնէին նշանը համբերելն է . ամմէն օր մէյմէկ առիջ ունինք բան մը քաշելու , թէ որ ուղենանք վարձք վաստըլիլ : Ուստի սրտերնիս աշխարքէ հեռացնելու համար , սիրով համբերենք մեր ունիցած նեղութիւններուն , :

Ըստհակալ նղաւ Յակովորան քահանային զուրցածներուն , ու գարձաւ տուն :

Անկէ վերջը Յակովորան քանի որ կազմամախի ծառին վրայի սլատկերքին կը նայէք , սիրով մխիթարութեամք կը լիցուէք : Ըստ անդամ կ'երթար աղօթքը ան սլատ-

կերպին դիմացը կ'ընէք . և ան ծառը իրեն  
ժամի պէս տեղ մը եղաւ , որ նեղութիւն մը  
իմանալուն պէս հօն կը վազէք մխիթարուե-  
լու համար : Հոլոր սրտանոյ ինքնինքը Աս-  
տուծոյ կամացը յանձնեց , որ իր որդին այս  
պիսի յանկարծական ու ցաւալի կերպով  
առաւ ձեռքէն : Ըստ շուտ խստովանին  
ու հաղորդուիլը իր սրտին խոցերուն մէջմէկ  
զօրաւոր գեղեր եղան : Օր օրուան վրայ ա-  
նանկ աւելցաւ իր հոգեւոր գանձը , որ մար-  
մնաւոր բարիքներէն զրկուիլը աչքին դիմա-  
ցը բան չէր երևնար : Իր նեղութեան ա-  
տենները շատ անգամ կ'ըաէք ինքնիրեն .  
“ Ո՞չ թէ որչափ երջանիկ է մարդ , երբոր  
բոլոր սրտով Աստուծոյ կ'ապաւինի : Երբոր  
մէկ հողի մը կը յածին շափ կը սիրէ զանի-  
կայ՝ որ միայն արժանի է մեր սիրուն , ինչ  
գարշելի բան կ'երևնան անոր աչքին առջեր  
աշխարհիս արիշ բանները , , :

## ԳԼՈՒԽ Բ

Աստուած իր ծառաները ձեռքէ  
յրողաւր :

Վես ատենն որ Յօհեղորային աշքեն ար-  
շոնիքը չեր սլակսեր իր զաւկին կորսուե-  
լուն փրայ, Ոմոնը ողջ առողջ և ամմէն  
յաջողութեամբ հարիւրաւոր մղսն տեղ  
քալելով հասեր էր ինցվան վ հնինա «Ե, եմ՝  
ցեստանի մայրաքաղաքը, և իցեր էր փա-  
ռաւոր տուն մը որ կարծես թէ թագաւ-  
որի սլալատ էր : Հան իր սլատուած խեղճ  
քաթերուն տեղը ավնիւ զգեստներ հազած՝  
հարուստ մարդու զաւկի մը պէս, ավնուա-  
կան տղու կրթութիւն առնելու ետեւէ էր :  
Եւ աս փոփոխութիւնը եղաւ աս կերպով :

Ոմոն քիչ մը ատեն կաղամախի ծառին  
տակը քնանալին եսքը արթընցաւ, առաւ  
իր կողովը, և մօրս արդելք շրջամըսելով,  
ելաւ դնայ անտառը կաղամախի ծառին

սպուղը ժողվելու : «Քիչ մը բան ժողվելէն ետքը կողովը լեցընել ուզելով երբոր ասդին անդին կը ողարտէր , առանց խմանալու ճամբան կորսընցուց . ուստի փոխանակ ես դառնալու , սկսաւ աւելի առաջ երթալ : Խել մը ատեն ասանկ քալելէն վերջը՝ հասաւ Դանուք գետին եղերքը որ անտառին մէկալ ծայրն էր : Տեսաւ որ խել մը մարդիկ կեցեր կը սպասեն նաւու մը որ ճամբորդները սկիտի տանէր : Ասանց մէջ տըղաք ալ կային , որոնք խաղալով աւազին մէջ գոյնզգոյն քարեր կը փնտուէին , ու գտնալնուն ալէս կը տանէին ուրախութեամբ իրենց ծնողացը կը ցուցընէին : Ալժոն աս սլքտի տղաքը տեսնելուն ալէս զարմացաւ մնաց . անոնք զինքը իրենց քովը կանչեցին , վրան թափեցան ու սկսան ասդիէն անդիէն բաներ հարցընել , ու նայիլ թէ ինչ կայ կողովին մէջը :

Ալժոն թող տուաւ որ նային : Ասանց մէջէն Արիամ անունով աղջիկ մը՝ Ալժոնին տարեկից՝ մէկէն վաղեց մօրը , “Կայէ մայրիկ , ըստ , նայէ ինչ աղւոր սպուղներ կան առ տղուն ձեռքք . կարծեմ թէ շագանակ է :

— ԱԵ , ըստ Աթոն , ասիկայ շագանակ չէ , կաղամախի ծառին խողակն է . բայց աս ալ կրնայ ուսուիլ . կ'ուղեք ուտել :

— Հա , հա , ըստն ամենքը մեկ բերան , տուբ մեվի , :

Աթոնն այ առատութեամբ բաժնեց ամ մենուն : ԱԵր կարծեր թէ ինքը անանել բան մը ունենայ որ ուրիշները փափաքին անոր . ինչ և իցէ , ասոր անոր տալով կողովը պարագուեցաւ . և Աթոն կ'ուրախանար որ կտոր մը վայրի սպազով կըցաւ այնչափ տղաք ուրախացընել . մեկ կողմանէ ալ չէր կշտանար մեկուն մեկալին հագուստը դիտելէն : Ենոնք ալ շուտով հետը բարեկամացան , ու տղան կողովը պարագ ետ չըդարձնելու համար , լեցուցին մշջու ինձոր , տանձ , ընկոյզ ու սալոր :

Աթոն ինչուան ան օրը ձելնորսի նաւակւներէն զատ ուրիշ նաւակ տեսած չէր . անոր համար ան ճամբորդներուն նաւը իրեն մեծ բան երեցաւ , ու սկսաւ հետաքրքրութեամբ նայիլ : Տեսաւ որ աս շարժոն տունը իրեն մօրը տնակլէն շատ մեծ էր : Տղաքը ձեռքէն բոնեցին տարին զինքը նա-

ւը: Արքիամիրեն ծնողացը վարձած խուց  
յը տարաւ Ովթներ . “ Ա՛ս , լաւ Ովթն  
զարմանալով մը , ես կարծէի թէ աւագեց  
ըէցին խուցէն ետքը աշխրդքիս վրայ էն  
վառաւոր խուցը մեր տունն է . հիմա կ'իւ  
մանամ որ խարուեր եմ եղեր . ով պիտէ ,  
դեռ ի՞նչ բաներ կայ որ ես ամենեին տես  
սած չեմ , :

Արքիամիր բերեկամին զարմանքը աւ  
ելի շարժելու մոքով , չանեց մէկիկ մէկիկ  
ցրցուց իր տեսակ տեսակ խաղալիքները , որ  
ծնողը իրենց քալած երկիքներէն գներ  
էին : Ովթնին բերանը ալ խօսք չմնաց  
զուրցելու , վասն զի տեսածները բոլոր նոր  
էին իրեն համար . աս սպատճառաւ նայելու  
հետ ըլլալով մուցաւ նաւէն դուրս եղելու  
որ տուն դառնայ : Ան միջոցին որ ինչ  
քը խաղալիքները նայելու հետ էր , նաւա  
սկետը նշան տուաւ որ նաւը ճամբայ ելլայ .  
ամենքը մնան նաւն ու սկսան երթալ :

Առջի բերանը օտար տղուն հմն զտուիլը  
ամենենին մէկուն աչքին չզարկաւ . վասն  
զի ճամբորդները կարծեցին թէ աս տղան  
իրենցմէ մէկունն է , այսպէս մէկմէկու կար  
ծելով ճայն չհանեցին : Երբոր նաւը խել

մը տեղ առաջ գնաց , Այժոն իրիկուան  
դեմ սկսաւ լալ ու աղաչել նաւավարնեւ-  
րուն , որ զինքը ցամաքը հանեն ու երթայ  
դտնայ իր մայրը :

Ես բանէս մեծ շվեյթութիւն ընկաւ  
ճամբորդներուն մէջ : Կնիկ մարդիկը ոկր-  
սան խոճալ ու ցաւիլ տղուն ու իրեն մօքք  
վրայ . տղաքը իրենց բարեկամին գիսկուա-  
ծով հետերնին մնալը տեսնելով սկսան ծի-  
ծաղիլ ուրախանալ . նաւավարները որ տղ-  
ուն լայուն ամեննեին մտիկ չէին ընկը ,  
դլուխնին տաքցած սկսան սաստել իրեն ը-  
սելով . “ Տե՛ որ ձայնով վար չքաշիս՝ հիմա  
զքեզ ջուրը կը նետենք , որ երթաս ձկնեւ-  
րուն կերակուր ըլլաս ,, : Խոսկութիւնը չը-  
դադրեցաւ ինչուան որ նաւապետը եկաւ-  
րոնեց տղուն ձեռքէն մէկդի տարաւ , ու  
ծանրութեամբ մը սկսաւ խօսիլ հետը ու  
ըսել . “ Դառն ո՞ր քաղքէն կամ զեղէն ես ,  
ըսէ ինծի տեսնամ ,,: ”

Տղան դորդըրալով սկսախան տուաւ  
թէ . “ Ես ոչ քաղաքացի եմ , և ոչ զեղացի :  
— Ա՞կ տեղ մը կը բնակէիր թէ չէ :  
— Հրամեր ես . բայց մեր տունը ան-  
տառին քովն էր , զեղին մօտիկ :

— Ի՞նչ է աս գեղին անունը :

— Գեղին անունը չեմ դիտեր : Իմ մայրս  
անոր անուն մը չեր իտար :

— Վանի աս ըստ՝ ինձի .քու ծնողացու  
անունը ի՞նչ է , :

Դարձաւ ըստ լալով Ուժոն . “ Պա-  
րոն , ես հայր շոնիմ . մէկ քանի ամիս կայ՝  
իմ հայրս մեռած է , որ զիս խիստ կը սի-  
րեր . մօրս անունը Օքեոդորա է , որ կա-  
ղամախի ծառին քովը կը բնակի :

— Իր մականունը ի՞նչ է :

— Ա'ականուն շոնի . վասն զի մակա-  
նուն տալու սովորութիւն չկայ մեր տեղը .  
մայրս ինձի կ'ըսէր թէ մականուն տալը  
մարդիկ մէկ զմէկ ծաղը ընկլու համար գը-  
տեր են , :

“ Ա,աւասկետը տղուն աս զուրյածներէն  
քան մը չհասկընալով , ինչ ընելիքը չեր  
դիտեր : Ակսաւ նեղանալ ու ոտքը գետի-  
նը զարնելով ըսել . “ Ուսկից ալ եկաւ մտաւ  
աս տղան իմ նաւս , :

Ան միջոցին նաւը գետին ընթայքով  
կը ակալի պէս առաջ կ'երթար . նաւասկետին  
ալ տարակուսանքը քանի կ'երթար կ'աւել-  
նար . կը դառնար կ'ըսէր քովիններուն .

“ Ըստակը , շատ կը փափաքիմ որ սա տրուցն հասցընեմ իր խեղչ որբեարի մօրը ձեռքը : Իսպայ որովհետեւ անտառներէն ուրիշ բան չկայ , ցամաքին մօտենալս անօդուտէ , :

Վերջասկզբ արել մտնելու վրայ էր , մէջ մըն ալ հեռուէն տեսնաւեյաւ գեղի զանգակատան մը ծայրը :

“ Այսապեսու կ'ուզէք իեցընել նաւը , ցամաքը ելլել , երթալ գեղին մեծերուն հետ խօսիլ ու տղան իրենց յանձնել որ մօրը ձեռքը հասցընեն :

Մարիամին հայրը պարոն Վալըսուած՝ Հարուտտ վաճառական մըն էր , հետը շատ մնատուիներով ստակ ու զանազան սուղ բաներ ուներ : Վասն զի ան ատենները Գեղը մանխան սլատերազմներու սլատճառաւակին ու վրայ էր , և թշնամին ան տեղուանքը մօտեցած էր . ասոր համար թէ սլարոն Վալը և թէ մէկալ ճամբորդները Գանուք գետին վրայէն կը փախչէին հեռու տեղուանք կ'երթային որ իրենք զիրենք խալսեն :

Ես սլարոնը նաւապետին մօտեցաւ , “ Ես ալ կը փափաքիմ որ ժամ’մը առաջ աս տրուցն իր մօրը ձեռքը համեկ , ըստ . բայց

կարծեմ թէ Հիմա առանկ բան մտածելու  
աստեն չէ . թող որ շատ դժար է ատ զեղին  
մէջ անոանկ մարդ մը գտնել որ տղան ան-  
փորձ մօրը ձեռքը հասցընէ : Այսու , որ  
շատ հեռացանք տղուն մօրը բնակած տեղ-  
ւանիքէն . վասն զի առ զեղի մարդիկը ան  
զեղին մարդկանցը հետ երթևեկութիւն ալ  
չունին : Աս ալ զիտես որ թշնամիին խելքը  
միաբը ժամ մը առաջ Դանուբին ճամբա-  
ները գոյել է : Կտոր մը ուշանալով կը-  
նայ ըլլալ որ թշնամիներուն ձեռքը իյնանք :  
Խնծի կ'երենայ որ չէ թէ միայն չկենանք ,  
հապանակ ամենայն կերպով ջանանք ժամ  
մը առաջ տեղերնիս հանելու : Հիմա որ  
հովը յաջող է , զիշերն ալ լուսընկայ է ,  
պէտք է զիշերով ալ ճամբայ ընենք , :

« Աւավարները ոտք ելան ըսին , թէ զի-  
շերը ճամբայ ընելու սովորութիւն չունինք :  
» Այս երբոր պարոն Վալը աղէկ բարի  
ձեռք խոստացաւ իրենց , յանձն առին ու  
ոկսան լուսընկային լուսովը առաջ երթալ :

Վուաւուր զեղ մը հասան . նաւապետը  
ելաւ դուրս , զնայ մէկուն մէկալին աղա-  
շեց որ Աթոնիը առնեն ու մօրը խրկեն . շատ  
աշխատեցաւ համոզելու թէ անով մէկ մեծ

բարեգործութիւն մը ըրած կ'ըլլան . բայց  
անոնք ամմէնքն ալ ըսին , թէ ասանկ վը-  
տանդաւոր ատեն շճանցած տղայ մը չենք  
առներ . թող որ չորս դին սպատերապմ'կայ ,  
մենք տղան ընտո՞ր տեղը հասցընենք . հա-  
սլա թէ տղան ինչուան ետքը քովերնիս մնա-  
լու ըլլայ նէ , ի՞նչ ընենք . ուր թողունք ,  
որ մեր քովը ատանկ խեղչեր չեն սպակսիր ,  
մանաւանդ պատերապմին սպատճառաւը , որ  
բոլոր մեր ձեռքը կը նային :

“ Աւապետին ճարը հատած , դարձաւ  
եկաւ նաւը , ու ելան ճամբայ . բայց յոյսը  
շիտրեց : Այէկ քանի ժամէն ուրիշ գեղ  
մ'ալ հասան դետին մէկալ կողմը , ու դար-  
ձուցին նաւը դէպ 'ի հոն նորէն ցամաքը  
ելլելու : Այէյմըն ալ յանկարծ ձայն մը  
լսուեցաւ , ամմէնուն սիրտը դող եկաւ . պա-  
րոն Ա ալը “ Աս թնդանօթի ձայն է ,, ը-  
սելուն չմնայ , ետեւէն իրեք չորս մըն ալ  
լսուեցաւ . “ Հոգիդ սիրես՝ նաւապետ ,  
սկսաւ կանչել պարոն Ա ալը , կենալու ա-  
տեն չէ , չէ նէ ամմէնքս կը կորսուինք ,, :

Բայց աս խօսքերով նաւապետին սիրտը  
չէր հանդչեր : Ա տինալով թէ տղան իր  
վրայ կը մնայ . “ Հասլա ի՞նչ կ'ուղեք որ

ընեմ՝ աս թշուառական տղան, պոռաց պարոնին երեսն ՚ի վեր. Հարուստ մարդ մը չեմ որ քոխ առնեմ. արդէն ես իմ զաւ կըներս հազիւ կրնամնայիլ, ատ ալ վրաս մնայ նէ ի՞նչ պիտի ընեմ։ Ինչ որ կ'ուզէ ըլլայ, տեղ մը գտնելու պէս կը թողում։ Ասկէ վերջը մէյմ ալ նաւս մարդ չեմ առ ներ՝ ինչուան չքննեմ չիմանամ ով ըլլալը, որ մէյմըն ալ զլիսուս ասանկ փորձանիք չը դայ, : :

Կս մարդուն ըրած աղաղակն ու զուրցած խօսքերը լսելով պարոն Վալին խաթունը, դուքս եղաւ, մօտիկցաւ նաւապետին ու ըսաւ. “ Բաւական է, պարոն. աս խօսակցութիւնը դադրեցրնելու համար՝ ես ու երիկս մեր վրայ կ'առնենիք աս անմեղ տրդուն հոգը։ Որովհետեւ իմ աղջիկս սպաժառ եղաւ իրեն նաւ մտնալուն, ես կը հոդամ զինքը իմ զաւկիս պէս։ :

— Հա մայրիկ, ըսաւ Վարիամը, աղէկ կ'ընես որ կ'առնես. վասն զի Աթոնը անանկ աղէկ տղայ է, որ իմ պղտի եղբայրս կը նայ ըլլալ, :

— Անանկ է, քու եղբայրդ պիտի ըլլայ, ըսաւ մայրը. ես վրան հոգ կը տա-

նիմ։ Աստուած բարեգործութիւնը առանց  
վարձքի շմողուր „ :

Աս խաթունին ըրած վեհանձնութեամբը  
ամմէն խօսակցութիւն դադրեցաւ : « Ա,  
ւապետը ուրախանալով որ վրայէն թօթովեց  
խալսեցաւ ան հոգէն , շնորհակալ եղաւ ,  
նաւուն քիմը դարձուց զետին մէջ տեղը .  
Ե բոլոր Ճամբորդները դութեցին սպարոն  
Վալը այսակիսի բարեգործութեանը հա-  
մար : Ասանկով քանի մը օրէն ետքը ան-  
փորձ հասան Վ եննա :



## ԳԼՈՒԽ Գ.

Աղեկ կենցաղավարութիւն :

ՊԱՐՈՆ Վ ալը երբոր իր բաները ասրահովուց , միտքը դրաւ որ Վ եննանստի . ուստի հոն փառաւոր տօմն մը զնեց : Անկեց ետքը ոկսան վաճառականութեան հարլաւ և երթալով հարլաւութիւնը աւելցաւ : Իր աղջկանը Այարիամին վարպետներ բռնեց՝ ուսմունք սորվեցընելու . Ուժոն ալ կ'երթար մոխիկ կ'ընէր : Յաէպէտ ինքը դեռ մասնաւոր կըրթութիւն մը չէր առած , բայց յարմարութիւն ունենալը շուտ իմացուեցաւ . Քիչ առենուան մէջ անանիկ առաջ գնաց , որ ամմէնքն ալ դարմացան : Տարիքին հետ մէկտեղ իր բարի բարի կատարելութիւններն ալ դուրս եղան : Խոնարհ , հեղ , շարժմունքը խօսուածքը սլարկեշտ , ջերմեռանդ , և բոլորութին իր բարերարներուն հնապանու :

Պարոն Ա ալն ու իր կնիկը զաւկըներնուն  
սկէս կը սիրէին զինքը, և չէին դադրեր  
զԱստուած օքչնելէն որ ասանիկ խեղացի ու  
առաքինի աղու մը իրենց ձեռքովը ուզեց  
բարիք ընել: Ոթոն ալ իր կողմանէ չէր  
զիտեր թէ ինչպէս շնորհակալ ըլայ ա-  
նոնց . որչափ որ անոնց գութն ու սէրը կը-  
տեսնէր իր վրայ , այնչափ աւելի կը ճանչ-  
նար անոնց բարերարութեան յարգը և իր  
երախտագիտութեան պարտքը : Ան բարե-  
պաշտութեան ու առաքինութեան հունտե-  
րը որ աստուածասէր թէոդորան ցաներ  
էր սիրտը , մէկո՞ն տեղը սկսան հարիւր  
բերել , որ օրուան վրայ աւելի սիրելի ե-  
ղաւ :

Որովհետեւ ինքը վաճառականութեան  
սէր ու յարմարութիւն կը ցուցընէր , սկա-  
րոն Ա ալը իրեն տետրակ բո՞նել սորիվեցոյ :  
Ոթոն քիչ ատենի մէջ սկսաւ տանը բա-  
ներն ալ հոգալ , և քսան տարեկան շեղած  
անանիկ ծառայութիւններ սկսաւ ընել , որ  
փորձ մարդիկ ալ շատ դժուարութեամբ  
կընացին : Իր խոչեմութիւնն ու խելքը հա-  
զար բանի մէջ յայտնի երեցաւ . ուստի  
սկարոն Ա ալին ալ վաճառականութիւնը օ-

ըէ օր մեծնալով, շատ բան Աթոնին փայ  
կը թողուը :

Աթոնին բոլոր գործքերուն հոգին բա-  
րեսպաշտութիւնն էր. առաւօտ չէր եղած, որ  
առանց ջերմեռանդ սրտով աղօթք մը ընե-  
լու խույժէն դուքս ելէր : Երբոր գործքերը  
թող տային ‘նէ’ կ’երթար սկատարագ կը  
լսէր . աղքատներուն առատ ողորմութիւն  
կու տար, ստէալ ստէալ կը խոստովանէր՝  
սրբութիւն կ’առնէր . և բոլոր ջանքով կը  
զգուշանար ան ընկերութիւններէն որ իրեն  
բարեսպաշտութեանը մնաս մը կրնային բե-  
րել : Քատրոնները՝ տեսարանները՝ իր աշ-  
քին առջեւը տոլոց գէշութիւն ու մեղք սոր-  
մեցրնելու դսլրատուններ էին : Պատար-  
կութինէ կը փախչէր, ու գործքերը անանիկ  
շռտով ու կարգով կանոնով կը կատա-  
րէր, որ ամէն տեսնող կը զարմանար, ու  
չեար սէր կը կապէր :

Աս բաններս տեսնելով սկարոն Վալը իր  
ընկերոջը խորհրդով Աթոնին աղէկու-  
թեանը ու հաւատարմութեանը փոխարէն  
մը ընելու համար՝ որոշեցին Աթոնին հետ  
Վարխամը կարգելու՝ որ զիտութեան ու  
առաքինութեան կողմանէ Աթոնէն փար

չեր մնար : Օր մը պարոն վալը խմացոց  
իր միտքը Աթոնին , ըսելով թէ քու ըրած  
ծառայութիւններուդ փոխարէն մը կ'ուզիմ  
ընել :

Ես խօսքիս վրայ շատ զարմացաւ խեղչ  
տղան ու չեր գիտեր թէ ի՞նչ ըսէ . “ Նրա  
մանիքդ ինձի փոխարէն կ'ուզիմ ընել , ըստ  
իրեն . ես հրամանիքիդ սկիտի զուրցէի , թէ  
ուրիշ ի՞նչ բան ալ կընամ ընել որ իմ վրաս  
ցուցուցած գթութեանդ հատուցմունք մը  
ըրած ըլլամ : Յօէ որ հրամանիքդ չըլլայիր ,  
հիմա ես ի՞նչ վիճակի մէջ էի : “ Դուն զիս  
հօր սկէս նայեցար . ես թէ որ բոլոր կեան  
քիս մէջ աշխատելու ըլլամ , փոխարէնը  
չեմ կընար ընել . հիմա ի՞նչպէս կընամ  
քեղի փեսայ ալ ըլլալ :

— Ինձի ոչ քու պարտք գիտնալս սկէտք  
է , և ոչ ի՞նչ մարդու զաւակ ըլլալդ . բա  
ւական է որ խիստ աղէկի ճանչցեր եմ քու  
խելացի ու խոչեմ մարդ ըլլալդ , ու ա  
մէն բանէն աւելի Ճշմարիտ քրիստոնեայ  
ըլլալդ , :

Վէկ բանի օրէն ետքը հարսնիքը եղաւ :  
Եւ աս փոփոխութեամբս Աթոն ամեննեին  
իր պարտքէն չալակուցաւ . միշտ նոյն

մնաց , և ամենուն բարի օրինակ եղաւ իր  
բարեպաշտութեամբը : Իոլոր քաղաքը կը  
ճանչնար իր նոտած տունը , որ աղքատնե-  
րուն ու խեղճերուն ապաստանարան երած  
էր . աղքատ չէր եղած որ իրեն իյնայ ու  
ձեռքը սլարապ ետ դառնայ : Ասոր համար  
Աստուած ալ զինքը օրհնեց , ու ամեն բա-  
ները յաջող գնացին :

Քիչ մը ատենէն ետքը կայսրը տեսնելով  
սլարոն Վալին սլատերազմի ատեն ըրած  
օդուտները , ազնուականութեան սլատիւ  
տուաւ թէ իրեն և թէ իր փեսային . և ո-  
րոշեց որ անկէ վերջու անուննին Վալչէյմ  
ըստի : Իսայյ Ամոնին բարերարները շատ  
չկրցան վայելել ան սլատիւը , վասն զի-  
քանի մը տարիէն վերջու մեռան :

Ասանկով Ամոն անրաւ հարստութեան-  
ժառանգ ըլլակով մեծցաւ . ուստի վաճա-  
ռականութիւնն ալ թողուց , Այսիւէրա  
դնաց որ Հոն երկիրներ գնէ : Ան միջոցին  
Հոն տեղուանքի երկիրները շատ աժան էին՝  
սլատերազմներուն սլատճառաւը . ուստի  
ուզածը ընտրելու Այնիքիրք ըստած երկի-  
րը գնեց : Ասիկայ բերդ մը ոներ՝ փառա-  
ւոր սլարտէղի մը մէջ շնած . սլարտէղին

ծայրն ալ կենուանիներ պահելու տեղուանք ,  
բայց բոլորն ալ նորոգելու կարօտ :

Ոմն մէկէն ձեռք զարկաւ նորոգեց ա  
մէն տեղը , ներսն ալ զարդարեց ու դար  
ձաւ վ ենաա , առաւ իր ընկերը և տղաքը ,  
ու եկաւ բնակեցաւ ։ Այնքիրք :

Հոն ալ մէկէն իր բարեգործութեան ա  
նունը ելաւ : Որ կողմը աչքդ գարձնէ իր՝  
աւրած էրած շէնքիր կը տեսնէ իր . տեղ  
կար որ ամբողջ գեղեր էրած էին , և խեղճ  
գեղացիրը ան աւերակներուն տակը կը բնա  
կէին : Վեկի ցաւալին ան էր որ խեղճ  
մարդիկը պէտք եղած հունտերը՝ գործիք  
ները չունին , որ վարուցան ընկելով ա  
պրին :

Վս խեղճութիւններուն վրայ Ոմնին ու  
իր ընկերոջը սիրաը կը կտրրտէր : Օր մը  
երբոր քալելու ելեր էին , տեսան հայր մը  
ու մայր մը որ իրենց հօթը դաւակը դլուխ  
նին ժողված նստեր խաշած խոտ կ'ուտէին :  
Վարիամին սիրաը չդիմացաւ , աչու ըները  
լեցուած ըստ Ոմնին խեղճերուն քիչ մը  
ողորմութիւն տալ . ան ալ մէկէն հանեց  
քսակը , մէկ քանի ոսկի նետեց զրկերնին :

Տուն որ եկան , Ոմն խօսք բայցաւ

Արիամին չետ ան տեսած խեղճութիւն  
ներուն վրայ . “ Ես կարծեմ [թէ] , ըստ ,  
անանիլ քիչ մը ողորմութիւն տալով բան  
չըլար , հասկա անանիլ ճաօր մը ընելու է որ  
բոլոր խեղճութիւնները արմատէն վերցը .  
Նենք : Ինձի կ'երենայ [թէ] մեր ունեյած եր  
կիրներուն մէջի եղած անտառները ջարդել  
տանք ու ան փայտերով ըսենք տուներնին  
նորոգեն , ու ետքը մէյմէկ քիչ ստակ տանք  
իրենց հարկաւոր բաներ զնելու : Ես հեռու  
տեղերէ ցորեն ըերել կու տամ , և առանց  
ըստրկի կը բաժնեմ իրենց որ ցանեն . ի՞նչ  
կ'ըսես . կարծեմ [թէ] աս կերպավ հաստա  
տուն բարիք մը կ'ընենք իրենց , :

Արիամ գովից երկանը խորհուրդը .  
“ Ես ալ իմ կողմանիւս սլարասդ ատեններս  
լաթ կը կարիմ իրենց , ըստ . մանաւանդ  
ան տղոց որ մերկ կամ սլատրոտած լաթէ .  
ըսվ կը սլտրտին :

— Շատ աղէկ կ'ընես , ըստ Ոթոն .  
Ես բանի որ կը մտածեմ Արտուծոյ նախա  
խնամութիւնը , իելքս չշամնիր : Ես որ ա  
տենով աղքատ ողորմելի տղայ մըն էի , ու  
կ'երթայի անտառները խոզակ կը ժողվէի  
մօրս դիւրութիւն մը ընելու համար , հիմա

ասանիլ հարուստ ու այսչափ ընդարձակ  
երկիրներուն տէր ըլլամ, որ իմ տեսած  
քալած անտառս ասոր մէկ կէսին ալ չէր  
հասներ : Աստուած ինծի այնչափ բարիք  
ըրաւ, որ խեղճ մարդկանց բարիք ընելու  
չըլլամ նէ՝ աշխըրքիս վրայ ինծմէ ապե-  
րախտ անզգամ մարդ չկընար ըլլալ : Քա-  
նի որ իմ հայես աղքատներուն բաժին  
հանեմ, խեղճերուն արցունքը սրբեմ, ու  
ապրուստ մը գտնել տամ աս գեղիս խեղճ  
դեղայիներուն, ես ինծի երանի կու տամ :  
Աղքատայ բարիք ընելը՝ ամենեին ուրիշ  
մէկ զուարձութեան մը հետ չեմ փոխեր , :

Ոթոն ետքը հրամեց որ իր գեղին մէջ  
գտուած դեղայիներուն գլխաւորները քութ-  
դան . երբոր ամէնքը ժողվեցան, զնաց ինքն  
ալ մէջենին նատաւ ու յայտնեց իր միտ-  
քը, որով աշխարհը իրենցը եղաւ : Եւ  
ինչպէս որ խօսք դրեր էին՝ երկրորդ օրը  
մէկտեղ գացին անտառները՝ զատեցին ինչ-  
ծառ որ պիտի կտրեին : Դարձան ամէնքը  
շինեցին սններնին, արտերնին հերկեցին ցա-  
նեցին, և հինգ տարիէն անսանիլ շենցաւ  
զարդարուեցաւ գեղը՝ որ առջնուէն շատ  
աւելի ծաղկած տեղ մը եղաւ :

Ով կրնայ սլատմել Աթոնին ուրախու  
թիւնը՝ որ կլոյաւ իրեն պէս խեղջերուն բա-  
րերարութիւն ընել : Կատ անգամ՝ երբոր  
տնին կ'ելլար, գեղացիք զլուխը կը թափէին  
ձեռքը սլագնելու, և իրենց երախտագի-  
տութիւնը ցուցնելու : Ամէն ծառայու  
թեանը սիրով կը վազէին, ամէն կերպով  
իրեն ըրած բարիքներուն փոխարէն մը ընել  
կը ջանային :

Տայց Աթոն, որ անկէց եաքը սլարոն  
Վալչէյմկ'ըսուէր, ուզեց ուրիշբարիք մըն  
ալ ընել . դալրոց մը շինել տուաւ գեղի տր-  
ղոցը համար, և երեւելի վարսկետներ բլո-  
նեց : Երբեմն երբեմն ինքն ալ կ'երթար,  
կը զովէր՝ կը քաջալերէր զանոնք որ աւելի  
յառաջացեր էին, և զիրենիք յորդորելու  
համար սլարգեներ ալ կու տար : Իր բա-  
րեգործութիւններովը զարդարուեցաւ նաև  
գեղին ժամը ոսկիէ արծըթէ ընծաներով :

Աս կերսկով ան կողմերը տեղ չմնայ որ  
աս առաքինի մարդուն աղէ կութիւններուն  
մէկ նշանը շտեսնուի, և շիմացուի՝ թէ ա-  
սանկէ կ'ըլլայ հարստութիւն բանեցընելը :

## ԳԼՈՒԽ Դ

Աստուծոյ ձամբաները միշտ  
սրանցիցի են :

Այս միջոցին որ Ոթոն իր բարի վարքութը և աչքաբացութեամբը օրէ օր իր հայքուն աչքը կը մանար, իր խեղճ մայլը կեանքը աղքատութեամբ կ'անցընէր . բայց միշտ ջերմեռանդ ու Վատուծոյ կամացը հնազանդ : Այս աղքատ անակէն չելաւ, ուոկան շինելը ձեռքէ չժողուց, ինչուան որ սրատերազմբ հասաւ Շանեուք գետինքութը : Տեսնելով թէ իր տնակը վտանգի մեջ է, առաւ գործիքները դնաց իր ձենորս եղաօրը քոլ : Բայց հոն ալ շատ չկրցաւ կենալ . վասն զի թշնամիները անօթի գաղանի սլէս յարձըկեցան դեղին վրայ, ու ամէն բան կողովտելէն վերջը՝ կրակ տուին մոխիր դարձուցին . ասանկ ըրին քոլի գեղերն ալ : Յօքոդորան ելաւ դնաց

երեսուն մղոն հեռու լեռներուն մէջ տեղ մը  
իր քրոջը տունը : Քոյրը շատ սիրով ըն-  
դունեցաւ զինքը . Յօհովորան ալ սկսաւ  
կըթել անոր զաւկըները : Խակ եղբայրը ու-  
րիշ ձկնորսի մը քով մտաւ :

Յօհովորան ու իր քոյրը զլուխ զլսի  
տուած՝ համբերութեամբ կը ջանային իրենց  
քաշած նեղութիւնները իրարու անուշցը-  
նել : Տարիներ անցնելէն ետքը երբոր պա-  
տերազմը դադրեցաւ , կամաց կամաց ամէն  
բան տեղը սկսաւ դալ : Յօհովորան օր մը  
թուղթ առաւ եղբօրմէն , որ կը գրէր՝ թէ-  
ընկերու մեռաւ , և ես բարեպաշտ իշխաննե-  
րէ օգնութիւն զտնալով սկսայ առջի տունս  
նորէն շինել . աղէկ կ'ընես թէ որ ելես քովս  
դաս , որ քու բանդ ալ հոգամ :

Յօհովորան մնաս բարով ըստ քրոջը ,  
դարձաւ եղբօրը քով : Տունը առջի տեղը  
շինուեցաւ , պարտէզը մաքրուեցաւ , և եր-  
կու տարիին ետքը խեղճ ձկնորսը իր հան-  
գիտը զտնալով միտքը դրաւ որ ալ հոն  
ապահով իր օրերը լմբնցընէ :

Գարնան ատենը օր մը Յօհովորան ի-  
րիկուան ժամէն ելեղէն վիրջը , ողը զեղեցիկ  
ըլլալուն ուզեց քիշ մը ժուռ դալ . ուստի

զլուխը քաշեց գնաց դեսլ՝ ի ան անտառը՝  
ուր էր իր տնակը . որչափ որ առաջ կ'եր-  
թար , այնչափ զարմանիքը կ'աւելնար : Ա-  
մէն բան փոխառած էր . ան պղտի ճամբան  
որ իր տունը կը հաներ՝ բոլորութիւն կորսուեր  
էր . անտառին երեսը փուշ ու տատասկ  
լեցուեր էր . ծառերը թուփերը խոշորցած՝  
արդելք կ'ընեին համարձակ քալելու . խեղճ  
կինը սաստիկ նեղութեամբ հաղիւ կտոր  
մը առաջ գնաց : Շատ փնտուց իր տնա-  
կը . բայց և ոչ մէկ նշան մը կրցաւ դրա-  
նել : Արտին կսկիծը խօսքով չսրատմուիր :  
“ Ե՞նչաղէս ամի՞ն բան աւրուեր է , կ'ըսէր  
ինքնիրեն աշուշները լեցուած . պատերազ-  
մը իմ՝ խեղճ տնակս ալ աւրեր է ուրեմն :  
Եայիմ զոնէ կընամ զտնել ան ծառը ,  
որուն տակը ես առենավ այնչափ մխիթա-  
րութիւններ ունեցեր եմ՝ վրան կախած Ա-  
տուածածնայ սրատկերքիս առջելը աղօթք  
ընելով : Ուր էր թէ կարենայի զտնել ան  
պատկերքը , որ վախէս փախչելու առենս  
մոռցայ հետո առնելու . շատ դէշ բան ըրի  
այնպիսի գանձը կորսնցընելով . արդեօք  
ի՞նչ եղած է , : Աս ըսելով ոկտա փընտ-  
ոել սրատկերքին ծառը :

Եցրոր ինքը ծառերուն Ճիւղերը մէկդի  
ընել ու բաժնել կ'աշխատե՛ր՝ որ կարենայ  
Ճամբայ բանալ, ու ան մեծ կաղամախին  
ծառը գտնալ, տեսաւ որ ծերուկ մը ձուկ  
բոնելու համար որդ կը փնտոե՛ր . “Պա-  
րապ տեղը ատենդ կը կորսնցընես սիրելի՝  
ան քու տանդ քովի եղած ծառը գտնելու  
համար, ըստ Յակովորային . վասն զի ա-  
նիկայ շատոնց կացինին բերանը գայած  
սլիտի ըլլայ : Գիտեմ որ դուն ալ մեղի  
սկս կը զարմանաս այսչափ փոփոխութիւն-  
ներուն վրայ, որ մենք ալ մեր գեղին վրայ ե-  
ղած տեսանք սպատերազմէն վերջը : Անոնք որ  
մենք տղայ գիտե՛ինք՝ հիմա մարդ եղեր են .  
ու մենք ծերացանք ինկանք՝ որ ան ատենը  
նոր մարդ եղեր էինք : Ասանկ ալ աշխը-  
քիս վրայ ամէն բան փոխուելու հետ է . ա-  
սանկ ալ ծառերուն հիները կ'իյնան, որ  
սղտիկներուն տեղը ըլլայ, անոնք ալ իրենց-  
մէ սղտիկներուն Ճամբայ կու տան : Ասով  
Ասովուած խրատ կու տայ մեղի որ աշ-  
խըքիս հետ սրտերնիս չկապենք . մեր  
հայրենիքը երկինքն է որ ոչ կը փոխափ  
ե ոչ կ'աւրուի . ջանանք որ բարի գործ-  
քերով ան տեղը համինք, ուր որ Աս-

տուած սկիտի ըլլայ մեր վարձքը յաւի-  
տեան , :

Ծակողորա Էրած սրտով մէյմնալ ա-  
չուըները չորս դին դարձուց նայեցաւ , ու  
դարձաւ տուն :

Այս ամառը խխտ աղեկ անցաւ . կար-  
ծես թէ Աստուած զթալով ժողովողեան  
քաշած նեղութեանը վրայ , ան տարուան  
առատութեամբը առջի մեամներուն տեղը  
Եցուց :

Պարոն Վալչէյին տունը Ծակողո-  
րային բնակած զեղէն մէկ քանի մղոն չե-  
ռու ըլլալով , ան զեղն ալիր ձեռքին տակն  
էր : Վախնալով որ չըլլայ թէ խեղճ զե-  
ղացիք ձմեռը փայտին սղութեանը պատ-  
ճառաւ նեղութիւն քաշեն , ուզեց իր ան-  
տառներուն մէջի հին ծառերը ջարդելու աղ-  
քատներուն բաժնել . և ինքը անձամբ գնաց  
որ աս գործողութեանս վրայ կենայ :

Կանչել տուաւ բոլոր զեղացիքը , մէկիկ  
մէկիկ հարցուց , կարօտութիւննին խմացաւ ,  
ու մարդ զլուխ մէյմէկ երկերկու ծառ տուաւ:  
Երբոր սկսաւ ամէն մարդ իրեն ընկած ծա-  
ռը ջարդել , մէյմըն ալ մէկ աղքատ կին մը  
մօտեցաւ պարոնին քովը , որ աւելի սրտին

յաւէն՝ քան թէ ծերութենէն սպառըցած  
կ'երենար . աս կինը թակողորան էր : Խո-  
նարհութեամբ սպարոնին բարեւ մը տալէն  
ետքը , յայտնեց իրեն թէ “ Ես շատոնցուր-  
նէ որբեարի մնացած կին մըն եմ , ու սպա-  
տերազմի ատենէն ’ի վեր ունեցածս շունե-  
ցածս կորանցուցած ըլլալով , հիմա եղքօրս  
տունը կը նստիմ . բայց եղքայրս հիւանդ ըլ-  
լալուն՝ ինքը չկրցաւ դալ որ հրամանոցդ  
իրեն տուած փայտը առնէ , ուստի կը խրն-  
դրեմ որ իր փայտը ինձի տաս , , :

Ոթոն աս կնկանը սպարկեշտութեանը ու  
սպարզմտութեանը վրայ ափշեցաւ . և ան միւ  
ջոցին որ ինքը դարձեր շորս դին կը նայէր  
թէ ո՞ր ծառը տայ թակողորային , անիկայ  
աղէկ մը աչքին ծայրուվը սկսաւ նայիլ դի-  
տել այնչափ բարեգործութեան համար ա-  
նունը ելած պարոնին կերպարանքը : Անոք  
առողջ , զեղեցիկ ու զուարժ դէմքը , փա-  
ռաւոր հագուստը , ձեռքի ունեցած աղա-  
մանդէ մասնին , թակողորային շատ զար-  
մանք բերին :

Ոթոն նշան տուաւ փայտ կտրողներուն  
որ ան որբեարիին համար , իր քովի եղած  
աղուոր կաղամախի ծառը կտրեն :

“ Ի՞նչպէս , սլարն , դարձաւ ըստ առողջմի մէկը . առ խեղճ ինկան համար աս զեղեցիկ ծառը կ'ուզես կտրել . անոր փայտը մինակ հրամանոցդ տանը կը վայլէ . ուրիշ փայտ շատ , անոնք տալու է ասանկներուն , :

Ապրոն Ոթոնը աղեկ մը չեխեց մարդուն , և ծոնք կերպով մը ըստ . “ Տէրը ես չեմ մի . իմ բանս ինչպէս ուզեմանակ կը գործածեմ . չե՞նե՞ միտքով գրեք ես թէ մեզի սլետք չեղած բաները աղքատներուն սլիտի տանք : Այնք մը եղբարքը ամեն բանեն լաւ բաժին սլիտի հանենիք . իմ հրամանաւ է . հիմա աչքիս առջելը առ ծառը սլիտի կտրեք ջարդեք , ու մէկեն շալկեք տանիք առ որբեարիին տունը . ի՞նչ կեցեք էք , շնորհած ըրեք , :

Խեղճ որբեարին չեք դիտեք թէ ինչպէս շնորհակալ ըլլայ պարոնին . և ցած ձայնով մը ըստ . “ Իմ որդիս ալ ըլլար՝ կարծեմ թէ ասկէց աւելի առատաձեռնութիւն չեք կրնար ընել . Կստուած օրչնե՞ զինքը , :

Ոթոն որբեարիին շնորհակալութիւններէն խալքսելու համար՝ դնաց ուրիշներուն բանը հոգալու :

Փայտ կտրողները սկսան զարնել կացինը  
ծառին, որ խոշոր ըլլալուն համար շատ  
դժուար կը կտրուեր . վերջասկս ցընսցուե-  
լով ինկաւ վար, կեղեն ալ ճղքուեցաւ,  
մէջէն բան մը դուրս ցաթեց :

“ Ա այ աս ի՞նչ բան պիտի ըլլայ,, կան-  
չեցին մարդիկը, ու կացինները թողուցին  
վրան թափեցան :

“ Տեսէք ի՞նչ սիրուն, ի՞նչ գեղեցիկ  
սլատկերը է,, ըսին, ու սկսան մէկը մէ-  
կալը նայիլ : “ Այէ նայէ, ըսաւ մէկը,  
ցաւագին Աստուածածինն է խաչին տակը  
նստած : — Բայց ի՞նչ սիրուն քաշուածք  
է,, ըսաւ մէկալը : — “ Երաւ որ վարպետ  
մարդու բան է,, ըսաւ ուրիշ մը :

“ Ճապա շրջանակը ի՞նչ սիրուն է . ես  
մէկ օրուան առնելիքս կու տայի աս սլատ-  
կերիս համար,, կ'ըսէք մէկն ալ :

— Բայց ի՞նչովէս աս սլատկերքը ծառին  
մէջ մտեր է :

— Ո՛ դիտէ, քանի հարխը տարի է որ  
մէջն է,, ըսաւ առջինը :

— Կը սխալիս բարեկամ, ատիկայ ան-  
կարելի է . ի՞նչու որ դեռ քաշուածքը նոր  
է . ես անոր վրայ ալ կը դարմանամ՝ թէ

աս թայ տեղը ի՞նչպէս առանց աւրուելու  
մնացեր է : Ինծի կ'երենայ որ աս պատ-  
կերը պատերազմին ատենները որ այնչափ  
մարդիկ լեռները փախեր էին՝ մէկը աս ծա-  
ռիս վրայ կախեր է : Ինչ և իցէ, աս պատ-  
կերը շատ սիրուն բան է,, :

Ես փայտ կտրողներուն վիճարանութիւ-  
նը սլարոնին ականջը հասաւ, մօտիկցաւ  
քովերնին նայելու թէ ի՞նչ կայ :

Փայտ կտրողները մէկ բերան դարձան  
ըսին իրեն . “ Տես, պարոն, մէկ գեղեցիկ  
պղտի սլատկեր մը գտանք,, :

Եռաւ Ոմոն սլատկերը սկսաւ աղէկ մը  
նայիլ . “ Իրաւ որ շատ գեղեցիկ է, ըսաւ,  
շատ վարսետ քաշուածք . աս ի՞նչ անուշ  
կերպով ձգուած է Եստուածածնայ տըրտ-  
մութիւնը . ան վեր վերցուցած աչուըներուն  
դիրքը ի՞նչ բնական է . հապա ան կապուտ  
զգեստին ծալքը ի՞նչպէս ալ դուրս ցաթ-  
կած է : Ո՞վ զիտէ, որ բարեալաշտ մար-  
դը կախեր է ատենով հոս, որ երբեմն եր-  
բեմն կու զայ եղեր մտածական ընելու աս  
առանձին տեղը, կամ Եստուածածնայ ոտ-  
քըն ընկած իր թշուառութիւնները կու լայ  
եղեր . որ ետքը կեղեւ մեծնալով՝ մէջը ծած-

կուեր է , ինչպէս շատ անգամ՝ կ'ըլլայ :  
Բայց նայինք տակը զիր մը կայ զրած „ ,  
ըստ ու դարձուց սպատկերը որ կարդայ :

♦ աղիւ թէ մէկ երկու բառ կարդաց , եւ  
ըստին գոյնը նետեց , ձեռուըները սկսան  
դողդըլալ , ծնկուըները չբանել . սկսաք եւ  
դաւ որ մէկդի քաշուի նստի . գլխարկն ալ  
վար քաշեց որ խռովիլը չիմացուի :

“ Տէր Աստուած , աս ի՞նչ բան է որ  
կարդացի „ , ըստ ինքիրեն :

Այէյ մըն ալ կարդաց զրուածքը , որ  
կ'ըսէք . “ Յամի տեսոն 1562 , հոկտեմբ  
„ , բերի 40 . իսկին մէկ հատիկ վեց տարե  
„ , կան սիրելի որդիս Առմմէր Ոթոնը վերջի  
„ , անգամ աս կաղամախի ծառին տակը  
„ , պառկած տեսայ : Ուր որ է՝ Աստուած  
„ , հետը ըլլայ , կամ դառնայ զայ իր սդա  
„ , որ մայրը միմիմարէ :

ԹԵՌԴԱՐԸ ՍՈՄՄԵՐ „ :

Աւ Ոթոն չկրնալով բռնել իր սրտին  
ցաւը՝ սկսաւ ըսել . “ Անտարակոյս աս  
սպատկերը իմ խեղճ մայրս կախեր է հոս  
որ իմ կորսուելուս վրայ միմիմարուի . ա-

նունը, օրը, տարին յայտնի կը ցուցընեն  
իրեն ըլլալը : Արդեօք հիմայ ի՞նչ եղած  
է : Ի հարկէ մեռած սիտի ըլլայ . փամ  
զի որչափ ետևէ եղայ դժնելու , ամենենին  
տեղեկութիւն մը չկրցայ առնուլ վրան :  
Աստուած ողորմի հոգուն,, :

Խսկ թակուրան փայտերը առնելէն ետ-  
քը երբոր ուրիշ դրայի դեղացի կնկան մը  
հետ տուն դառնալու վրայ էր , լսեց սպատ-  
կերքին բանը . քիչ մը մօտիկցաւ , տեսաւ  
որ սպարոնը ձեռքը բռներ կը նայի , շուտով  
մը ճանչցաւ : Այս ատեն սիրտը չդիմա-  
նալով՝ քաղաքավարութիւն շնայիցաւ , ա-  
շուըները լեցուած մէկդի ըրաւ ժողովուրդը՝  
մօտիկցաւ սպարոնին քով . “ Ա՛չ , տէր իմ ,  
ըսաւ , ատ սլդտի սլատկերքին տէրը ես եմ .  
կ'աղաչեմ , շնորհք ընես ինձի տաս : Ատի-  
կայ մեր աւագերէցը տուաւ ինձի , որ իմ  
որդւոյս կորսուելուն ցաւը անով փարատի :  
Իմ անունս է ատոր վրայի զրուածքը . և  
կ'ըսուիմ թակուրա Առմմէր . բոլոր իմ  
դրացիներս ինձի վկայ թէ զուրցածներուս  
մէջ ստութիւն չկայ : Կ'ուղես նէ՝ բերնուց  
ալ զուրցեմ ինչ որ ատոր վրայ զրեց քա-  
հանան ինձի տուած ատենը , :

Ետքը մէկէն պարոն Ուժոնին ոտքը ինչ  
կաւ ըսելով. “Այս, աս ինչ մեծ ուրա-  
խութիւն է ինծի. քսանը վեց տարիէն ետ-  
քը նորէն արժանի եղայ տեսնելու ան տե-  
ղը, ան կաղամախին ծառը որն որ հրա-  
մանքդ ինծի տուիր, և իմ խեղճ Ուժոնս  
տակը վերջի անգամը քնայաւ: Ինյց աւե-  
լի ուրախ կ'ըլլայի թէ որ իրեն վրայ լուր  
մը առնէի: Այս խմին խեղճ Ուժոնս. ահ  
խմին սիրուն զաւակս. ալ յոյս չկայ ինծի  
զքեղ տեսնելու աս աշխըրքիս վրայ: Աս  
ծառը քանի որ կը տեսնեմ, կարծեմ թէ  
քու զերեզմանդ է. ասոր տակը այսչափ  
ատեն ես զքեղ մեռած սեպելով՝ այնչափ  
արցունք թափեր եմ: Այս, հիմա բոլոր  
սրտիս ցաւերը նորոգուեցան. ահ, միայն  
ասով զիս երջանիկ կը սեպեմ, որ նորէն  
աս տեղս տեսայ զերեզման չմտած, ուր  
որ դուն անշուշտ ինծմէ առաջ մտեր  
ես . . . , :

Աւ չիկրցաւ լալէն խօսքը առաջ տանիլ:  
Արդէն պատկերին ետեի զրուածքէն Ու-  
ժոնին սիրաը ելեր է. երբոր մօրը աս կեր-  
պը ու խեղճ թափելը տեսաւ նէ՝ ալ չդի-  
մացաւ. կ'ուզէր մէկէն մօրը զիրկը իյնալ

այրլուիլ, ըսել, թէ ես եմանքու կորսընցոցած տղադոր մեռած կարծեր ես . բայց վախցաւ թէ յանկարծ անանկ անկարծելի ուրախութիւնը իրեն մահ կրնայ բերել : Աւստի խոչեմութիւն բանեցընելով՝ բոնեց ձեռքէն, վեր վերցուց զինքը, նստեցուց քովը նոյն ծառին կոճին վրայ ու ըստ . “ Աիրադ ուրախ բոնէ, գեռ որդիւդ ողջէ, ես կը ճանչնամ զինքը . խօսք ալ կուտամքեզի որ քու ձեռքդ հասցընեմ,, :

Աս խօսքերովս թէոդորան կարծես թէ խորունկ քունէ մը արթընցաւ . աշուըները մէյմը դէալ ’ի երկինքը կը դարձընէր Աստուծոյ շնորհակալ ըլլալով որ իր որդին դեռ կենդանի պահեր է . մէյմըն ալ պաքնին կը նայէր թէ արդեօք իրան է անանկ մեծ աւետիսն որ իրեն տուաւ :

Կամաց կամաց երեսը գոյն եկաւ . իր որդին շուտավ տեսնելուն անուշ յոյսը սիրով հանդարտեցուց . աշքին արցունքները սրբեց, սկսաւ ծիծաղերես մէկուն մէկալին նայիլ, որ կարծես թէ կեցեր իրեն ուրախութեանը կ'ուզէին մասնակից ըլլալ :

Ոմն տեսնելով որ բաւական պատրաստեցաւ, ալ չկցաւ ինքզինքը բոնել .

դարձաւ ըստ Յակովորային . “ Ո՞վ սիրեցի մայր իմ, ես եմքու որդիդ . քսանը լից տարիեն ’ի վեր կորսրնցուցած տղադ ես եմ . ես եմքու Ոթոնդ, զրկէ զիս : — Դու, իմորդիս Ոթոն . . . , ըստ Յակովորան ու մարեցաւ ընկաւ զիրկը :

Տօլոր կեցողներուն սիրտը ելաւ, սկսան լալ, ու ջանացին Յակովորային խելքը գլուխը բերել : Որդին ամեն ջանք ըրաւ որ մայրը արթըննայ . իրեն ալ ուրախութենէն լեզուն կապուեցաւ, չէր զիտեր թէ ինչ ըսէ :



## ԳԼՈՒԽ Ե

Փորորիկեն վերջը հանդարտուրիւն  
կ'ըլլայ , նեղուրենեկն վերջն ալ  
մխիրադուրիւն :

ԵՐԲԱՐ ՅԱԷՌՈԴՈՐԱՅԻՆ ԽԵԼՔԸ ՊԼՈՒԽԸ  
ԵԼԱՆ , ըստ իրեն ԱԺԾՈՆԸ . “ Կը տեսնան ,  
մայր իմ սիրելի , որ Վատուած քու ինձի  
Համար ըրած աղօթքդ լսեր է . վասն զի  
զիս ամեննեին երեսէ չձգեց : Խնչալէս ին-  
քը սուրբ Վատուածածինը՝ իրեն որդւոյն  
յարութեամբը մխիթարեց , ասանկ ալ այս  
օր զքեզ մխիթարեց՝ զիս նորէն քեղի տա-  
լով : Վս ան ծառն է , որուն տակը մենք  
մէկմէկէն բաժնուեցանք , ու նորէն աս ծա-  
ռիս տակը Հիմա մէկզմէկ գտանք : Վա-  
տուած ասանկ կամեցեր է եղեր մեր օդտին  
Համար . մեղի ուրիշ բան չմնար , բայց  
եթէ մէկտեղ Վատուածոյ ողօրմութեանը  
փառք տանիք , որ զմեղ ասանկ խելքէ մաքէ

շանցած կերպով մխիթարեց : Գիտեմ՝ որ  
քու սիրող շատ տրորեցաւ իմ կորսուելու  
վրայ . քու օրերդ ցաւով ու տըրտմութեամբ  
անցուցիր . բայց ի՞նչ ընենք , եղաւ ըլլալիքը .  
փոթորիկէն վերջը հանդարտութիւն կ'ըլ-  
լայ , նեղութենէն վերջն ալ մխիթարութիւն :

— Աղէկ կ'ըսես , որդեակ , ըստ մայրը ,  
որ իր Ամոնին վրայ նայելէն չէր կշտա-  
նար . իրաւ է , մեծ նեղութիւն էր որ Աս-  
տուած տուաւ ինծի . բայց աս ալ աւելի  
մեծ մխիթարտթիւն է : Երբոր զքեզ տե-  
սայ , ես քաշածներս բոլոր մոռցայ . երանի  
ինծի որ քեզ իմ գիրկս կը տեսնամ հիմա :  
Ով գիտէ . իմ քովս մնացած ըլլայիր նէ՝  
կարելի է թէ ինչուան հիմա ողջ մնացած  
ալ չէիր : Աստուած անոր համար զքեզ  
քովէս հեռացուց որ ինծմէ հեռու ըլլաս .  
Հոն կրթուեցար մեծցար առաքինութեամբ  
ու բարեսպաշտութեամբ , ու հիմա դարձար  
քու հայրենիքդ , զիս գտար , որ ծերու-  
թեանս ատենը իմ մխիթարանքս ըլլաս ,  
ինչպէս որ արդէն բոլոր զեղացոց երջան-  
կութեանը պատճառ եղեր ես , : Ասոնք  
խօսելով չէր կշտանար լալէն ու զինքը  
պաղնելէն :

Աս կերպով ուրախութեամբ սնցած ժամանակը խիստ կարծ երեցաւ : Փայտ կուրողները և բոլոր հոն զտուողները հասկրցան թէ աս կարդէ դուրս բան մըն է , և մշջերնին կը խօսէին թէ հոս տեղս Աստուծոյ յայտնի հրաշքը կայ :

Արել մտաւ , մութը կոխեց , սլարոն Ոմոնը խմացոց մօրը՝ թէ պէտք է տուն դառնանք : Ապրսալեց իր գեղասկետին որ երթայ թէ ոդորային եղբօրը հասկրցնէ , թէ աս իրիկուն չգար , ու վաղը առաւոտ իր Ոմոնին հետ մէյտեղ կու գան : Թէ ոդորան աղաչեց ան ատենը իր դրացի կընկանը՝ որ ան իրիկունը ինքը կենայ հիւանդին քովը , խոստանալով թէ երկրորդ օրը աշխատանիքին փոխարէնը կ'ընէ : Պարոն Ոմոնը մէկէն հանեց քսակը՝ ոսկի մըտուաւ անոր , ու նորէն ասլըսալեց իր մօրը ըսածը :

Ամէնքը քաշուեցան տեղերնին , Ոմոն ալ մօրը հետ ելան մեծ ճամբուն վրայ , ուր որ փառաւոր կառք մը կեցած իրենց կը սպասէր , մտան մշջը :

Բայց թէ ոդորան բոլոր ան ճամբուն մէջ ուրախութենէն ապշած էր . “ Այս խըսդ

նիմ, կ'ըսէր տղուն՝ ասանկ հինումին հազ  
գուստներովս խաթունիդ առջին եղելու,, :  
Ոմոն սիրտ տուաւ իրեն, ու կառքէն վար  
իջնելու ատեննին ձեռքէն բռնեց տարաւ  
ներս՝ իր ընկերոջը առջևը հանեց :

Վարիամ որ աղէկ զիտէր հագուստէն  
շշափել մարդը, մեծ սիրով և ուրախու-  
թեամբ ընդունեցաւ իր կեսուրը, վազեց  
պագտուեցաւ հետը, և սկսաւ ամէն կեր-  
սլով յայտնել իր սրտին ուրախութիւնը՝  
իր էրկանը մայրը տեսնելուն համար : Խակ  
ֆէոդորան կու լար միայն :

Ասանկ քաղցը ուրախութեամբ քիչ մը  
ատեն անցնելէն ետքը, առաւ Վարիամը  
զմականութուան տարաւ սրահին քովի մէկալ  
սենեակը . “ Ճրամէ, եկուր, ըսաւ, որ տես-  
նաս իմ մանտրտիկ գանձերս,, : Ֆակո-  
րան կարծեց թէ դէղ դէղ ոսկի, արծաթ,  
աղամանդներ, մարզրիտներ պիտի տես-  
նէ : Վէյմըն աղ տեսաւ որ սենեկին մէկ  
անկիւնը փառաւոր նստարանի մը վրայ եր-  
կու հատ սիրուն տղաք նստեր կը խաղան՝  
Վնտոնիկը ու Վարդուհին, դայեակն ալ  
իրենց քովը :

“ Կհա ասոնք են, ըսաւ Վարիամ

Յժեռդորային , ասոնք են իմ մանալատիկ զանձերս . կը յուսամ որ ատենով ասոնք ալ իրենց հօրը նման կ'ըլլան , ու մեզ կ'ուրախացընեն , :

Ետքը դարձաւ ըստ տղոյը . “ Եկէք տղաքս , եկէք ձեր մեծ մօրը ձեռքը սպազէք , որ մենք մեռած կարծէինք , ու Կատուած սլարդեց մեղի , : Կնանք ալ մշկէն ցաթկլտելով եկան գիրկին ընկան : Յժեռդորան վրանին գուրգուրալով զմայլելով առաւ սիրեց զիրենք . վրայ եկաւ Ուժոն , մօրն ալ սիրտը նորէն ելած , ըստ անոր .

“ Դեռ երեկ էր որ սաստիկ տրտմութեան մէջ թաղուած էի . ու չիմա անանեկ ուրախութիւն մը ունիմ որ չեմ կրնաք պատմել , չեմ կրնաք հասկրցնել . կարծեմ թէ տարիներ անցեր են առաւօտանց ’ի վեր՝ քանի որ եղբօրս տնէն ելեր եմ : Կայսեր զարմացեր եմ աս բաներուս վրայ՝ որ լալէն , ու Կստուծոյ դատաստանին վրայ զմայլելէն ’ի զատ ընելիքս չեմ գիտեր : Տէր Կստուած իմ , թէ որ աս աշխըրքիս վրայ պյաղիսի կերպով զմեղ կը միսիթարես նէ , հապա ի՞նչ պիտի ըլլայ երբոր օր մը ար-

Ֆանի ըլլանկ արքայութեան մէջ զքեղ  
շայելելու : Վ'չ, արժանի ըրէ զմեղ ամէնքս  
ալ ան օրուան՝ որ մէկտեղքու ոտքդ ըն-  
կած՝ զքեղ փառաւորենք յաւիտեան :

— Աստուած ընդունելի ընէ զուրցած-  
ներդ, բսաւ Ոթոն . Ես իմ կողմանէս աս  
օրուան դիպուածին մէջ յայտնի կը տես-  
նամ Աստուծոյ անբառ զթութիւնը : Աս-  
տուած թեթև հիւանդութիւն մը խրկեց  
եղբօրդ վրայ, որ պէտք ըլլայ հրամանքիդ  
անտառը դալու : Օխ շարժեց որ երթամ  
դէալ 'ի ան ծառը՝ որ որ ես վերջի ան-  
գամը քոն եղայ, ու դու մէյմըն ալ զիս  
շտեսար : Ան ծառը ես առանց դիտնալու  
և առանց ուրիշներուն խօսքին մտիկ ընելու  
որոշեցի որ քեզի համար կտրեն, ու վրայէն  
դսանկ աս պզտի պատկերը,, բսաւ, ու  
հանեց Ոթոն ծոցէն պատկերը՝ ցըցուց  
Արքամին . ասանկ ինքն ալ կարծ կեր-  
պով մը ան դիպուածին պատմութիւ-  
նը հասկըցաւ . ուրախութեամք համբուրեց  
պատկերը ու փառք տուաւ Աստուծոյ, որ  
այնպիսի զարմանալի կերպով իր ամենա-  
կարողութիւնը ցըցուց :

Ան ատենը խուցին դուռը բացուեցաւ,

ու մաքուր հազուած ծառայ մը ներս մը  
տաւ , ըստ՝ թէ կերակուրը սլատրաստ է :  
Եշան իրեքը մէկտեղ փառաւոր դարդարուն  
սենեակներէ անցնելով գնացին սեղանաւ  
տունը , ու նատան սեղան : Այս ատենը  
տեսնելու էր խեղճ թձէողորային զարմանը  
քը . վասն զի ինչուան ան ատենը սրտին  
ուրախութենէն տրիշ բաներուն ուշ չէր  
դրած : Այեղանը մէկմէկէ գեղեցիկ՝ մէկ-  
մէկէ ազնիւ սրտուղներով ու կերակուրնե-  
րով զարդարած էր : Արծըթէ ամանները  
հայլիի պէս կը փալփլէին . փառաւոր կան-  
թեղ մը սեղանին վրայ կախուած՝ արեգա-  
կան սլէս լսս կու տար . ճարակիկ ծառանե-  
րը իրենց տիրոջը ետին կեցած , նշան մը տ-  
ուածնուն սլէս կամքը կը կատարէին : Այ-  
սոնք ամէնն ալ թձէողորային համար նոր  
բաներ էին , որուն կերակուրը ամէն իրի-  
կուն՝ սկալ կաթ ու գետնախնձոր էր : Կե-  
րակուրէն վերջը մէկ ժամի չափ ալ խօսա-  
կցութեան կեցան սեղանատունը . ան միջո-  
ցին տղաքն ալ եկան . ետքը թձէողորան  
տարին իր սլառկելու սենեակը՝ որ մէկալ  
տեղերուն պէս սիրուն զարդարած էր :

Հետևեալ օրը պարոն Աթոնը առաւ չե-

տը իր մայրը , մոտաւ կառք , ելաւ գնաց իր  
քեռին տեսնելու : “Օք ձեռարար Շահողու-  
րային դրացիէն ամէն բան իմացեր էր . աս  
աւետիար արդէն կէս մը առողջացուցեր էր  
զինքը . իսկ երբոր Աթոնն ու մայրը տեսաւ՝  
բոլորովին ըուժնացաւ , ու քաղցր արցուն-  
քով դարձաւ ըստ Յակոբ Նահապետին  
սլէս . “ ԱՀ Հիմա Հանգիստ սրտով կը  
մեռնիմ , որովհետեւ նորէն արժանի եղայ  
տեսնելու աս սիրելի տղան՝ որ մեր այնչափ  
հոգ ընելէն ետքը Հիմա գտնուեցաւ . մենք  
կարծէինք թէ Դանուք գետին մէջ խրդ-  
դուեր է , կամ վայրի գաղանները զինքը  
սպատուեր են . ահա Հիմա գտնուեցաւ ,  
մեզ ուրախացույ , :

Շահողորան եղբօրը քովին չքամնուե-  
ցաւ , ինչուան որ անիկայ սկսաւ իր բանին  
գործքին հետ ըլլալ :

Աս դիպուածը չորս դին տարածուե-  
ցաւ , ու ամէնքը երանի կու տային թէ մօրը  
և թէ որդւոյն՝ որ այսպիսի կերպով մէկըզ  
մէկ գտան :

## ԳԼՈՒԽ Զ

Պարուն Որոնիս առատաձևութիւնը :

Ոթո՞ւ ու Ամարիամ՝ չէ թէ միայն չը-  
խսինեցան անսանկ աղքատ աղգականներ  
ունենալինուն համար, հապա ջանացին ալ  
ամէն կերպով ցուցընել անոնց փրայ իրենց  
գութը : Օժէոդորան առին քովերնին, ու  
փրայէն աշքերնին պակաս չէր : Աւրիշ բա-  
ներէն 'ի զատ, մէկ աղախին մըն ալ դրին  
որ ծառայէ իրեն, այսշափ ալ ստակ կա-  
սկեցին որ ուղածին պէս գործածէ : Ամէն  
օր Ամոնին հետ մէկտեղ սեղան կը նստէր .  
ասանկ ուրախութեամբ ինչուան խոր ծերու-  
թիւն հասաւ առանց մոմուռքի : “ Ի՞նչ  
պէս անքաւ է, կ'ըսէր, Աստուծոյ բարե-  
զմութիւնը . քանի որ երիտասարդ էի ու  
իմ աշխատանքովս կընայի ապրուստս գըտ-  
նել, նեղութիւն տուաւ ինծի, որսկէս զի  
հիմա որ ծերացեր եմ ու բան չեմ կընար  
ընել նէ՝ ամէն բարիք սլարդել ինծի : Օժէ-

որ Ամոնս քովս մնացած ըլլար , ով զիտէ-  
ինչ կ'ըլլար ինծի ալ իրեն ալ՝ ան պատե-  
րազմին ատենները : Ես բանն որ ես մեծ  
խեղճութեան տեղ կը դնէի , տես թէ ինչ  
մեծ օգուտներ բերաւ . ասանկ ահա Ես-  
տուած շարէն բարիք կը հանէ : Ենք կոյր  
ենք . ինչ որ առջենիս կը տեսնենք՝ անոր  
փրայ դատաստան կ'ընենք . ետեւ ինչ որ  
սիխտի գայ՝ ան չենք մտածեր , ու կը սկը-  
սինք տրտոմիլ հոգ ընել ան բաններուն փրայ՝  
որ սկէտք էր թողուլ որ Եստուած ինքը  
հոգայ , :

Պարոն Ամոնը մօրը ամէն պէտք եղած  
բանները առատութեամբ հոգալէն ետքը ,  
ետեւ եղաւ ծեր քեռիին բաններն ալ կարգի  
դնելու . առատ թոշակ մը կապեց անոր , որ  
առանց ուրիշի կարօտելու հանգստութեամբ  
անցընէ օրերը : « Ա, ոյնպէս հոգաց նաև իր  
մօրքուրերը , և զամենքը երջանկացոց :

Ետքը Ամոն վարպետ պատկերահանի  
մը ձեռքով նորոգիլ տուաւ Եստուածա-  
ծնայ պատկերը , շրջանակին ալ նորէն ու-  
կի զարնել տուաւ , ու կախեց իր պառկելու  
խուցը անկողինին փրայ , որ քանի որ տես-  
նայ՝ յիշէ Եստուածոյ իրեն փրայ ցուցուցած

նախախնամութիւնը : Երբոր տղաքը քիչ  
մը մեծցան , սպատմեց անոնց իր սղտիկու-  
թիւնը , իր կորսուիլը , իր ճամբորդութիւնը  
դէսկ 'ի վեհնա , իր հայրենիքը դառնալը ,  
և մանաւանդ իր մայրը գտնելը անտառին  
մէջ . միտքը ան էր որ որտերնուն մէջ տալա-  
ւորուի խոնարհութիւնն ու բարեսլաշտու-  
թիւնը : Տղաք շատ օգուտ քաղեցին իրենց  
հօրը սպատմութենին . խնդրեցին ալ որ մէկ  
օր մը երթան տեսնեն անտառը ու ան ծա-  
ռին տեղը . հայրերնին ալ խնդիրքնին կա-  
տարեց : Երբոր տղաքը զարմացած աս ան  
ծաղիկները կը նայէին որ իրենց սպարտէղին  
մէջ չկար , դիտուածով գտան սղտիկ աղ-  
բիւր մը որ հօրերնուն բնակած տնակեն  
շատ հեռու չէր . “ Աս աղբիւրիկը , ըստ  
Ոթոն , որչափ անդամ դացեր եկեր է իմ  
մայրս ջուր բերելու համար . ես ալ շատ  
անդամ եկեր եմ հոս ջուր խմելու , երբոր  
խողակ կը ժողվէի . շատ սպատուական աղ-  
բիւր է . ոչ ձմեռը կը սառի , ոչ ամառը կը  
ցամքի , միշտ նոյնչափ ջուր կը բղսէ : Ա-  
սանկ սլիտի ըլլայ մեր սիրտն ալ , սիրելի  
որդեակք իմ , ըստ Ոթոն , որ ոչ կիրքե-  
րուն կրակը՝ և ոչ դժբաղդութիւնները կա-  
րենան զմեզ խոռվել , :

Տղոցը հետ երբոր հասաւ բուն իր ծնած  
մնակին տեղը, Ոմոնին սիրտը նորէն ելաւ  
ու շկրցաւ ինքզինքը բռնել, տկսաւ լալ-  
տղաքն ալ հետը լացին : “Աստան իրենց  
մնակին տեղը, և աս բաներուս վրայ կը  
խօսակցէին . մէյմըն ալ յանկարծ ձայն մը  
լսեցին անտառին մէջ : Ըուտ մը ծառանե-  
րուն մէկը վազեց եկաւ ըստ, թէ “ Արդ  
եկաւ , , , ու մէկէն երեցան Արքիամն ու  
թաէոդորան :

“ Աւզեցինք մենք ալ ձեր հետը գալ սկը-  
տրտիլ, ըստ Արքիամ : Անք ալ ձեզմէ  
ետքը մէկէն ճամբայ ելանք առանց ձեզի  
տեսնուելու . ուստի այսօր մեր տունը կերա-  
կուր ուտելու տեղը, մենք հոս բերինք բա-  
ները որ հոս ուրախանանք . աղէկ է թէ չէ :

— Հա, հա մայրիկ, ըսին տղաքը, վա-  
ղելով մօրերնուն քով, աղէկ մտածեր ես .  
ինչ ուրախութիւն է, որ այսօր աս անտա-  
ռիս մէջ պիտի անցընենք , , :

Կառաները կերակուրները գետինը դը-  
րին, ծառերէն ճիւղեր կտրեցին՝ վրանի պէս  
բան մը շինեցին . ետքը կրակ վառեցին ու  
սկսան կերակուրը եփել : Ալ ով կընայ  
պատմել աս միջոցիս մէջ տղոց ունեցած

ուրախութիւնը : Կակուղ կանանչ խոտին  
վրայ կերան կերակուրնին , ու մուժ ատեն  
տուն դարձան :

Երբոր ամէն բան ժողվեցին ու Ճամբայ  
սլիտի ելլէին , Ա'արիամ դարձաւ ըստ Ո.  
Թոնին . “ Բան մը կը խնդրեմ հրաման .  
քէդ : Աս գեղեցիկ տեղը իրաւցընէ մար-  
դուս ջերմեռանութիւն կը բերէ . ինձի կ'ե-  
րևայ թէ աղէկ կ'ըլլայ որ այսչափ յաջո-  
ղութիւններուն յիշատակ՝ հոս մատուռ մը  
շինել տանիք 'ի պատիւ սուրբ Աստուածա-  
ծնայ : Ա'էկ քանի ծառ ալ կտրել տանիք  
նէ՝ պղտի Ճամբայ մը կը բացուի , որ ժո-  
ղովուրդը դայ սուրբ Աստուածածնայ պաշտ-  
պանութիւնը դանայ , ինչպէս որ աս մեր  
առաքինի մայրը Տժէողորան զտաւ , :

Ոթոն շատ հանեցաւ ընկերոջը զուր-  
յածին , ու իրեք ամսէն ետքը ծառերուն  
մէջ գեղեցիկ մատուռ մը շինուեցաւ 'ի պա-  
տիւ սուրբ Աստուածամօրը , սիրուն խորա-  
նով . որուն մէջ դրած էր աս պղտի պատ-  
կերին մեծը . Ճակատն ալ աս խօսքը դրած .


## ՅԱՆԿ ԳԼԽՈՅՑ

---

ԳԼ. Ա. Միայն բարեսկաշտութիւնն է մարդուս ուրախութեան պատճառ . . . . .	5
ԳԼ. Բ. Աստուած իր ծառաները ձեռքէ չժողուր . . . .	26
ԳԼ. Գ. Աղէկ կենցաղավարութիւն.	37
ԳԼ. Դ. Աստուծոյ Ճամբաները միշտ սքանչելի են. . . . .	46
ԳԼ. Ե. Փոթորիկէն վերջը հանդար- տութիւն կ'ըլլայ, նեղու- թենէն վերջն ալ միիթա- րութիւն. . . . .	60
ԳԼ. Զ. Պարոն Ռթոնին առատա- ձեռնութիւնը . . . .	68









1 期

1

5206